

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՆՈՐԱԴՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վերջին տարիների ընթացքում լույս են տեսել հայոց լեզվի պատմության ու պատմահամեմատական բերականության կարևոր խնդիրներին նվիրված մի շարք լուրջ մենագրություններ: Այդ աշխատություններն, ընդհանուր առմամբ, արժեքավոր ներդրում են հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում և սովետական հայագիտության նվաճումն են կազմում: Սույն հոդվածի մեջ մենք փորձում ենք համառոտակի ներկայացնել այդ աշխատությունների բովանդակությունը, վեր հանել նրանց գիտական արժանիքներն ու բերած նորությունները և մի քանի խնդիրների մասին մեր կարծիքն ասել: Յուրաքանչյուրի վրա մենք կանգ կառնենք առանձին-առանձին՝ հետևելով նրանց հրատարակման հաջորդականությանը:

1. Հին հայերենի հոլովման համակարգի պատմահամեմատական ուսումնասիրությունն է նվիրված պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանի աշխատության: Այդ նույն պրոբլեմին է նվիրված մեծավաստակ հայագետ Հ. Աճառյանի «Լիակատար բերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության III հատորը, որը լույս է տեսել 1957 թ.: Գ. Ջահուկյանի ուսումնասիրությունը, սակայն, միանգամայն անկախ է նրանից և հանձնված է եղել հրատարակության նախքան նրա լույս տեսնելը: Դիրքը բաղկացած է առաջաբանից, 6 գլխից ու զանազան հավելվածներից. դրբին կցված է ամփոփում ռուսերեն լեզվով: Առաջաբանի մեջ հեղինակն ամփոփ կերպով շարադրում է իր ուսումնասիրության նպատակն ու այն հիմնական դրույթները, որոնցով առաջնորդվել է նյութի հետազոտման մեջ: Այստեղ ուղադրության արժանի է այն քննադատական վերաբերմունքը, որ նա ցուցաբերում է մինչև այժմ հայերենի հոլովման համակարգի ուսումնասիրության մեջ դրսևորված միակողմանիության

թյան նկատմամբ. հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ անհնարին է լրիվ պատկերացում կազմել հայերենի հոլովման համակարգի ձևավորման մասին և լուսաբանել այդ պրոցեսը, առանց բազմակողմանիորեն հաշվի առնելու այն հսկայական գերը, որ խաղացել են պատմական Հայաստանի ու նրա շրջապատի բազմաթիվ լեզուները: Պրոֆ. Գ. Ջահուկյանը ելնում է այն ճիշտ դրույթից, որ հայերենի հոլովման համակարգի, ինչպես և բոլոր մյուս բաղադրիչների, ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է լուսաբանել հին հայերենի հետ ենթաշերտային (սուբստրատային), առշերտային (ադստրատային) և վերնաշերտային (սուպերստրատային) հարաբերություններով առնչված լեզուների գերը: Այսպիսի մոտեցումը միանգամայն ճիշտ է. և ի՞նչ հեղինակը միշտ չէ, որ կարողանում է որոշակիորեն բացահայտել հայերենի և հիշյալ կարգի լեզուների փոխադարձ կապերը, ապա դրա պատճառը մի շարք լեզուների (հայասերեն, լուվիերեն, ուրարտերեն և այլն) մասին մեր ունեցած տվյալների սահմանափակությունն է:

Աշխատության առաջին գլխում հեղինակը տալիս է հին հայերենի հոլովման համակարգի ուսումնասիրության պատմության համառոտ տեսությունը երկու բաժնով: Առաջին բաժնում (էջ 11—26) նա համառոտակի ներկայացնում է գրաբարի հոլովման համակարգի նկարագրական ուսումնասիրության պատմությունը, բնութագրելով ինչպես դրա առանձին շրջանները (հունատիպ բերականությունների շրջան, լատինատիպ բերականությունների շրջան, ինքնատիպ բերականությունների շրջան), այնպես էլ առանձին հեղինակների դերն ու նրանց բերած գիտական նորությունները: Երկրորդ բաժնում հեղինակը հանգամանորեն քննության է առնում հին հայերենի հոլովական համակարգի ուսումնասիրության պատմության հիմնական էտապները, ցույց տալիս, թե ո՞ր հեղինակն ի՞նչ գեր է խաղացել այդ բնագավառում, ի՞նչ կարծիքներ է հայտնել

1 Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, 1959, 408 էջ, գիրք 1 ու 43 կ.:

հայերենի հոլովման համակարգի ու զրա գտնազան իրողությունների առաջացման մասին և ի՛նչ նպաստ է մատուցել հայոց լեզվի տվյալ բնագավառի ուսումնասիրությանը իր հետագա ուսումնասիրողների և հետազոտողների համար: Այստեղ էլ հեղինակը որոշակիորեն իրարից զատում է Երկու շրջան (հայերենի իրանական ծագման տեսությունների շրջան և հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի ինդո-նուրույն ճյուղ լինելու տեսությունների շրջան) և ճիշտ կերպով բնութագրում զրանցից յուրաքանչյուրը:

Երկրորդ գլխում գրքի հեղինակը համառոտ ակնարկով բնութագրում է հնդեվրոպական ձևաբանական տիպը, հոլովման համակարգի Լական հատկանիշները և զրանց կրած փոփոխությունները հայերենում: Հաշվի առնելով հնդեվրոպական լեզվաբանության նորագույն նվաճումները և հենվելով հատկապես Բենվիսիսի, Հիրտի, Կուրթիովիչի և այլոց ուսումնասիրությունների վրա, հեղինակը կարողանում է վեր հանել հին հայերենի հոլովման համակարգի հիմնական հատկանիշները. ցույց տալով միաժամանակ, թե զրանցից որոնք են առավել հնատիպ, այսպես կոչված նախահնդեվրոպական (պրոտոհնդեվրոպական) և որոնք՝ համեմատաբար նորատիպ: Այդ բնութագրությունից ելնելով էլ, հայագիտության մեջ ընդունված հին հայերենի հոլովման երկու տիպերի՝ ծայնավորահանգ հիմքով հոլովումների և ծայնորդահանգ հիմքով հոլովումների գոյությունը ճիշտ է համարում, իր կողմից ավելացնելով, սակայն, որ «կարելի է առանձնացնել նաև մի անցողիկ՝ ծայնավոր ու ծայնորդահանգ հիմքով կամ տարահիմք տիպ, որ գոյություն ունի Երկու հիմնական տիպերի առանձնահատկությունները» (Էջ 75): Այս առանձնացումը, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է և բխում է հնդեվրոպական նախալեզվի ներքին պատմության լուսաբանման բնագավառում ձևորեն բերված նորագույն նվաճումների հաշվառումից. առ ի գոյություն ունեցող սոցիալական պատմության և նշելով միայն, որ այդ տարբերակումը կիրառելի է պատմական-ծագումնաբանական մոտեցման դեպքում միայն, և ոչ թե գրաբարի համաժամանակյա (սինխրոնիկ) նկարագրական ուսումնասիրության մեջ:

Աշխատության երրորդ գլուխը (Էջ 83—122) նվիրված է հին հայերենի հոլովման համակարգի ուսումնասիրությանը: Այստեղ հեղինակը երեք բաժնում քննության է առնում. ա) հին հայերենի հոլովների կազմությունը, բ) հոլովումները՝ երեք տիպերով (ծայնավորահիմք, ծայնորդահիմք, տարահիմք) ու զրանց

բազմազան ենթատեսակները, գ) հին հայերենի հոլովման համակարգի օրինաչափությունները: Առաջին երկու բաժիններում հեղինակը սպասուկա կերպով ընդգրկում է հին մատենագրության մեջ ավանդված գրաբարյան հոլովման բոլոր երևույթները թե՛ առանձին հոլովների կազմության մեջ և թե՛, մանավանդ, հոլովման տիպերի ու զրանց տարատեսակների մեջ: Նա այսպես կոչված «անկանոն» հոլովումներն էլ բաշխում է ծայնորդահիմք ու տարահիմք տիպերի վրա. սա միանգամայն արդարանում է ծագումաբանական-պատմական մոտեցմամբ, որ հեղինակը հետևողականորեն կիրառում է իր աշխատության մեջ: Ընծար է ներկայացնում երրորդ բաժինը, որ նվիրված է հին հայերենի հոլովման համակարգի օրինաչափությունների բացահայտմանը: Հայտնի է, որ հին հայերենի հոլովման հիմքերի և հետևաբար, հոլովումների տարբերությունների հարցը հայագիտության կնճառոտ խնդիրներից մեկն է: Գրաբարը, այն վիճակով, որ մեզ ավանդված է, հնարավորություն չի տալիս բառի ուղիղ ձևի հիման վրա որոշելու, թե ո՞ր բառը ո՞ր հոլովման է ենթարկվում: Եթե հաշվի չառնենք մի քանի մասնակի կանոններ, որոնք օգնում են իմանալու զանազան խմբերի պատկանող բառերի հոլովումները (ի-ով հանգող բառեր, զերբայնք ևն), ապա, ընդհանուր առմամբ, մինչև այժմ բառերի այս կամ այն հոլովման պատկանելու հարցը ղեռն լուրջ քննության առարկա չի դարձել: Պրոֆ. Գ. Զահուկյանը ճիշտ կերպով գտնում է, որ այդ հարցում հայագետների մոտ արտահայտվել է երկու ծայրահեղություն, որոնցից յուրաքանչյուրը խիստ միակողմանի մոտեցման արդյունք է. «Գրաբարի նկարագրական քերականության հեղինակները,— գրում է Գ. Զահուկյանը,— մեծ մասամբ աչքաթող անելով հիմքերի ծագման հարցը և չխորանալով հարցի էության մեջ, բավարարվում են միայն որոշ արտաքին-ձևական հատկանիշների (ածանցների և բառավորչային հնչյունների) մատնանշումով: Համեմատական քերականության հարցերով զբաղվողները, ընդհակառակն, աչքաթող անելով հին հայերենի առկա կամ սկզբնավորվող օրինաչափությունները, բավարարվում են այս կամ այն բառահիմքի հնդեվրոպական հնարավոր նախատիպը նշելով» (Էջ 112): Այս երկու ծայրահեղություններից առաջինը հետևանք է այն բանի, որ անտեսվում է երևույթի պատմական բնույթը, իսկ երկրորդը՝ այն բանի, որ հաշվի չեն առնվում հայերենի հոլովի վրա առաջացած կամ միայն նոր սաղմնավորվող երևույթները: Ընդհանուր առմամբ, այդ երկու ծայրահեղություն-

ների բնորոշումը ճիշտ է, եթէ հիշենք, որ նկարագրական-համաժամանակյա քերականութիւնների համար դա անխուսափելի է, և հետեւաբար, մեղադրելի չէ։ Այդ կարգի քերականութիւնները բնորոշվում են հենց նրանով, որ դործ չունեն պատմական պրոցեսի հետ և ներկայացնում, գիտականորեն նկարագրում են լեզվական երևույթները այնպէս, ինչպէս նրանք կան տվյալ, հարաբերականորեն կայուն վիճակի մեջ։ Ինչ վերաբերում է համեմատական ուսումնասիրութիւնների մասին արված հանդիմանանքին, ապա մենք դրան լիովին համաձայն ենք։ Այդպէս զնահատելով իրերի վիճակը, աշխատության հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ հին հայերենի հոլովումների հարցն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել մի կողմից հնդեվրոպական շրջանից եկող օրինաչափութիւնները, մյուս կողմից՝ հայերենի հոգի վրա առաջացած օրինաչափութիւնները, որոնք էլ իրենց հերթին կամ արդյունք են նախահայերենի ու հին հայերենի զարգացման ներքին օրինաչափութիւնների, կամ էլ՝ սաղմնավորվող նոր երևույթների Պարզաբանելով զբանջից յուրաքանչյուրի կոթիւնը, հեղինակն այնուհետև գտնում է, որ նախահայերենի ու հին հայերենի հոլովումների համակարգի գոյացման մեջ հիմնականում գործել են երեք տիպի օրինաչափութիւններ։ Հնչյունային, իմաստային-քերականական և խաչաձևման։ Դրանից ելնելով էլ նա հանդամանորեն քննութիւն է առնում հին հայերենում անունների (բացի դերանուններից) հոլովումները և նշում յոթ օրենք, որոնցով որոշվում է, թե ո՞ր բառը ո՞ր հոլովման է ենթարկվում։ Այդ օրենքներն են. վանկարանակութիւն օրենք, առնմանական հնչազդեցութիւն օրենք, տարնմանական հնչազդեցութիւն օրենք, իմաստային խմբավորման օրենք, ֆունկցիոնալ տարբերակման օրենք, խաչաձևման դոմինանտութիւն օրենք, խաչաձևման գուգաձևութիւն օրենք։ Այդ օրինաչափութիւններից յուրաքանչյուրը հանդամանորեն բացատրված է և, մեծ մասամբ, հիմնավորված անհրաժեշտ տրվյալներով։ Այն մանրակրկիտ հետազոտական աշխատանքը, որ կատարել է հեղինակը և այն խորաթափանց դիտողականութիւնը, որ դրսևորել է նա, միանգամայն դրականորեն են բնութագրում այդ բոլոր վերլուծութիւններն ու եզրակացութիւնները։ Առանց տատանվելու կարելի է ասել, որ հեղինակի պրպտումները հաջողությամբ են պահպնել և սահմանված օրինաչափութիւնները բավականաչափ հիմնավորված են։ Անհրաժեշտ ենք գտնում, սակայն, մի դիտողութիւն անել. այն բոլոր օրինաչափու-

թիւնները, որ թվում է հեղինակը, միայն պատճառական կամ, այլ կերպ ասած, ծագումաբանական նշանակութիւն ունեն, այսինքն՝ նրանք բացատրում են, թե ինչո՞ւ այս կամ այն բառը զբարարյան համակարգում տվյալ հոլովմանն է պատկանում և ոչ թե մի ուրիշին, բայց այդ օրինաչափութիւնները չեն կարող դիտվել որպէս կանոններ, որոնց օգնությամբ կարելի կլինի որոշել, թե զբարարյան ո՞ր բառը ո՞ր հոլովման պիտի ենթարկվի։ Մեր ասածն ավելի պարզաբանելու համար բերենք մի քանի օրինակներ. զբարարում ունենք տու՛ն, Գու՛ն, Խու՛ն, Խու՛ն, Բառերը. ո՛չ պրոֆ. Գ. Ջահուկյանի սահմանած այդ յոթ օրինաչափութիւնները. ո՛չ էլ մինչև այդ արդեն հայտնի կանոնները չեն կարող օգնել մեզ՝ իմանալու, թե զբանջից ո՞րը ի՞նչ հոլովման է ենթարկվում, և միայն զբանջից յուրաքանչյուրի հոլովումն առանձին՝ առանձին սովորելով կարող ենք իմանալ, որ տու՛ն-ը ենթարկվում է ձայնորդահիմք տիպի ուն ա՛ն հոլովման, երկրորդը և երրորդը՝ ձայնավորահիմք տիպի ու հոլովման, իսկ չորրորդը՝ նույն տիպի ի հոլովման։ Այս իմանալով, ահա, կարող ենք դիմել հիշյալ յոթ օրինաչափութիւններին և պարզել, թե պատմականորեն ի՞նչ գործոնների առկայութիւն հետևանքով է ստացվել, ասենք, տու՛ն կամ Գու՛ն բառերի այս կամ այն հոլովումը։ Իհարկե, հիշյալ օրինաչափութիւնների բացահայտումը մեծապէս կարող է նպաստել զբաբարի հոլովման համակարգի նկարագրութիւնը, բայց նրանք չի կարելի դիտել որպէս քերականական կանոններ՝ զբարարյան վիճակի որպէս հարաբերականորեն կայուն սիստեմի համար։ Պրոֆ. Գ. Ջահուկյանն, անշուշտ, այդպէս էլ հենց մտտնում է խնդրին, բայց անհրաժեշտ էր, մեր կարծիքով, այդ բոլորը ամենայն հստակությամբ պարզաբանել։

Չորրորդ գլխի մեջ հեղինակը քննութիւն նյութ է դարձնում հայերենի հոլովման քերականական կարգերի (կատեգորիաների) ծագումը կամ, այլ կերպ ասած՝ հոլովի, թվի, սեռի պատմական ճակատագիրը հայերենում։ Այս գլխում, ամփոփելով հայագետների հետազոտութիւնների արդյունքները, նա գալիս է այն եզրակացութիւն, որ հայերենը համեմատաբար հարազատութիւն է պահել հնդեվրոպական հոլովները, կորցնելով միայն կոչականը, վերացրել է գոյականների սեռերը, ինչպէս և՛ երկակի թիվը։

Հինգերորդ գլխում քննութիւն է առնվում հին հայերենի հոլովման միջոցների ծագման հարցը։ Պրոֆ. Գ. Ջահուկյանը, առանձնապէս կանգ առնելով շեշտի, որպէս հոլովման հա-

մակարդում կարևոր գեր խաղացած երևույթի վրա, և օգտագործելով հնդեվրոպական շեշտին նվիրված նորագույն ուսումնասիրությունները, ցույց է տալիս, որ հայերենի ու նախահայերենի շեշտի հարցը մի շարք կենտոն կողմեր ունի, և այդ մասին մինչև այժմ ընդունված պատկերացումները լիովին չեն ընդգրկում երևույթն իր բոլոր կողմերով: Հենվելով հոլովման, ինչպես և բառակազմության բազմաթիվ տվյալների վրա, նա առաջ է քաշում այն կարծիքը, ըստ որի նախահայերենի շեշտը միշտ չէ, որ հանդեպ է վերջավանկի անկման, հաճախ նկատվում է վերջավանկի պահպանում, իսկ նախորդող վանկի ձայնավորի՝ թուլացում կամ անկում: Մյուս կողմից, հեղինակը գրանում է, որ նախահայերենում շեշտի, որպես հնչյունափոխական գործոնի դերը շատ հաճախ խիստ կերպով սահմանափակվում էր պայմանավորված լինելով ձևաբանական հանգամանքներով: Աշխատության այս հատվածը, ամբողջությամբ վերցրած, շատ կարևոր է հրեղեվրոպական տոնիկ շարժական շեշտից հայերենի ուժգնության կայուն շեշտին անցնելու պրոցեսի ուսումնասիրության տեսակետից. կարելի է ասել, որ դա հայագիտական ուսումնասիրությունների մեջ այդ շարքին նվիրված ամենահանդամանակից ու առավել ամբողջական քննությունն է: Իհարկե, ինչպես հեղինակն էլ շեշտում է, իր վերլուծությունները չեն սպասում հարցն իր ամբողջ խորությամբ ու բազմազանությամբ. բայց դրանք արժեքավոր նյութ են տալիս հետագա նաուել ուսումնասիրությունների համար, լուսաբանելով նաև մի քանի կարևոր խնդիրներ:

Նույն գլխի երկրորդ հատվածում հեղինակը կանգ է առնում լուրջման մեջ հնչյունական փոփոխությունների խաղացած դերի. նրանց ծագման ու հետևանքների վրա: Այստեղ հեղինակն ամենից առաջ քննության նյութ է դարձնում հնդեվրոպական ձայնդարձի հետքերը՝ ձայերենում, ցույց տալիս, թե ինչպես են արտացոլվել հնդեվրոպական ձայնդարձի գանազան երևույթները հայերենի հոլովման համակարգում և ինչ գեր են ստացել որպես լուրջների տարբերակման միջոցներ: Ամբողջ հատվածը գրված է գիտական բարձր մակարդակով և եղած բոլոր հետազոտությունների ըննական օգտագործումով: Գուգեինք, սակայն, մի քանի մասնակի խնդիրների մասին մեր կարծիքն ասելու խոսելով հայր, մայր, եղբայր բառերի երեք հիմքերի մասին (հայր, հայր, հար-բ), պրոֆ. Ջանուկյանը միշտ կերպով դիտում է, որ Հյուրչմանի և այլոց այն բացատրությունը, որի նամաձայն հար, մար և նման ձևերն

ստացվել են հարբ, մարբ միջակա ձևերից, հնարավորություն չի տալիս բացատրելու, թե ինչու այդ դեպքում հնիս. Ի-ս անփոփոխ է մնացել և չի տվել հյ. աբ, ինչպես լինում է առհասարակ: Ըր կողմից նա ենթադրում է, որ հնիս. քաթհիս և նման ձևերից նախ պետք է ստացվել հյ. քաուարբ և ապա՝ աուա կապակցության ամփոփումով՝ հարբ, ինչպես, որ եւե կապակցության ամփոփումով էլ ստացվել է ե. օրինակ, գեւիլք>գեղք ձևում (կջ 168—169): Այդ բացատրությունը մեզ շատ հավանական է թվում. բայց մենք կարծում ենք, որ այս դեպքում հեղինակը ավելի ծանրակշիռ եզրակացության կհանգեր, եթե հաշվի առնեք բարբառների տվյալները եւ. մեր մի շարք բարբառներում հայր, մայր, եղբայր բառերն ունենք հար, մար, եխպար||ախպար ձևերով: Նրբ քննության ենք առնում այդ բարբառների հնչյունական օրենքները, տեսնում ենք, որ մի քանիսի մեջ այն փոփոխությունն օրինաչափ է և հանդես է գալիս նաև ուրիշ բառերում (փայտ-փատ, այս>աս, ծայր>ծար են). բարբառներից մի քանիսում, սակայն, այդ երևույթը օրինաչափ չէ. սրանց մեջ ունենք, մի կողմից՝ հար, մար, ախպար կամ եխպար, իսկ մյուս կողմից՝ ձլբ, սկն (<սայր), փլտ, կծ և այլն: Հարց է ծագում, թե այս հար, մար, ախպար ձևերի ա ձայնավորը՝ այ երկրարբառի փոխարեն, չի՞ կարելի համարել նախահայերենի բարբառային տարբերություն և, հետևաբար, նարավար չէ, արդյոք, մտածել, որ քարբ, մարբ ձևերն էլ կապվում են այդ բարբառային երևույթի հետ թեկուզ և՛ աուա>ա ամփոփումով հանդեպ: Թվում է, թե այդ տվյալների ավելի մանրամասն քննությունը կարող է նպաստել հարցի վերջնական լուծմանը:

Խոսելով Բոյր բառի հիմքերի մասին, հեղինակը գտնում է, որ հոգնակի ուղղականի ու հայցականի Բու-հիմքը (բորբ, բորս) «ծագում է հոգն ուղղ. swesores հիմնաձևից Բեհուբ ձևի միջնորդությամբ» (կջ 171): Թեև այս բացատրությունն ընդունված է նաև այնպիսի անվանի հայագետների կողմից, ինչպիսիք են Ա. Մեյեն և Հ. Աճառյանը, բայց մեզ կասկածելի է թվում: Բանն այն է, որ հնիս. esO էջ. Եեո ձևը, ինչպես հայտնի է, հայերենում դառնում է ոյ, ինչպես, օրինակ, նույն բառի եզ. ուղղականում է swesor (բեհոր բոյր). արդ, եթե հոգն. ուղղականի և հայցականի նախաձևը լինեն swesores, նրանից պետք է ստանալինք Բեհուբ, Բեհուբ-ս, ապա՝ Բոյբ, Բոյբս, քանի որ ունենք Բուբ-բ, Բուբ-ս, ապա պետք է ենթադրել մի ուրիշ նախաձև, հավանաբար՝ swosores: Ահա սա-

րակ Եոյր բառի հնչյունական հիմքերը, ինչպես հեղն, Բուեր, Բուերս, այլև բարբառային Բու- ու, Բուեր ձևերը ենթադրում են նախահայերենի զուգահեռ բարբառային ձևեր, որոնք կարող էին առաջանալ swōseres, swōsores նախա- ձևերից. ցեղակից լեզուները բավականաչափ իմրեր տալիս են այդպիսի նախաձևերի գո- յությունը ենթադրելու համար, բայց եթե նույ- նիսկ այդպես էլ չլիներ, մենք կարող էինք հայկական հոդի վրա առաջացած այդ նախա- ձևերը ենթադրել թեկուզ միայն նախահայերենի համար՝ ներքին վերականգնումների ճանապարհ- հով։ Այս ամբողջ հատվածի մասին պետք է ասել ընդհանրապես, որ մեր բարբառների տվյալները բոլորովին հաշվի չեն առնվում (համառ. ութին-ով կազմված բառերը, ալևուր, աղբեր, ալուր, աղբիւր, աղբիւր և նման բառերի հոլո- վումը են)։ պրոֆ. Գ. Ջահուկյանը այս հատ- վածում, ցավոք սրտի, համեմատական քերա- կանության մեջ հաստատված ավանդական շրջանակներից դուրս չի գալիս, մինչդեռ բարբառների տվյալների ներգրավումը, ինչպես մեզ թվում է, կոպենը շատ հարցերի ավելի հստակ ու վճռական լուծմանը։

Նույն գլխի երրորդ հատվածում հեղինակը մանրամասնորեն քննության է առնում շեշտի հետ կապված հնչյունափոխությունները, պա- տավորելով դրանք զանազան խմբերի մեջ՝ ըստ ծագման, ըստ տարբեր տիպերի և այլն։ Այս- տեղ հաշվի են առնված գրաբարում ավանդ- ված այն բոլոր հնչյունական փոփոխություն- ները, որոնք կապված են շեշտափոխության հետ, ըստ որում դրանք բացառված են պատ- մական միանգամայն ճիշտ մոտեցմամբ։ Այս հատվածի մասին, ամբողջությամբ վերցրած, մենք ոչինչ չենք կարող ասել, բացի մեր գո- հունակությունը հայտնելուց։ Կուզենք միայն մի հարց արծարծել, որ վրիպել է հեղինակի ուշադրությունից. գալի՞ս փոփոխությունն է ու-ից առաջ։ Խոսելով ավանդաբար ընդունված իւ ու հնչյունափոխության մասին, հեղինակը գրում է. «Իւ ու հնչյունափոխությունն էլ, որ հաճախ բերվում է գրաբարի քերականությու- ներում որպես հնչյունափոխության առանձին տեսակ, փաստորեն ներկայացնում է ի-ի հնչյու- նափոխության մի մասնակի դեպքը. պետք է միայն նկատի առնել, որ ի-ն և ու-ն ներկայաց- նում են միևնույն հնչյունի գիրքային տարբե- րակները» (էջ 201)։ Այս գիտողությունը ճիշտ է և որևէ առարկության չի կարող հանդիպել, բայց դրան պետք է հետևեր նաև մի երկրորդ գիտո- րություն։ Գրաբարի քերականությունների մեջ, ինչպես հայտնի է, ընդունված է ասել, թե յազմավանկ բառերի վերջահանգ ի ձայնավորը

ո-ից առաջ փոխվում է Վ-ի, ինչպես որդի- որդույ, պրոֆ. Գ. Ջահուկյանն էլ այդ փոփո- խությունը նշում է, ասելով, «Ի-ն ո-ից առաջ գտնված դիրքում շրթնայնանալով վերածվում էր Վ-ի» (էջ 211)։ այս բնորոշումը ճիշտ է նկարագրական-համաժամանակյա մոտեցման դեպքում, բայց ոչ պատմական պրոցեսի լու- տարանման տեսակետից։ Ի ձայնավորի այդ- պիսի տարապայման փոփոխություն ունենք նաև ու-ից առաջ, մի բանի ածանցավոր բա- ռերի մեջ (որդի-որդություն, արի-արություն և այլն)։ Արդ, եթե մենք փոփոխվող հնչյունը համարենք ի-ն, ապա պատմականորեն չենք կարող որևէ ձևով բացատրել, որովհետև ի-ն փոփոխվելու դեպքում վերածվում է ձայնորդ- երկրաբառի բաղադրիչ յ-ի, որ ուժգնացող երկրաբառների մեջ արտահայտվում է և տա- ռով (օր. բարի-բարեաց)։ Սրանից ինքնին բխում է նախ՝ այն, որ եւ, եւայ կապակցու- թյունների մեջ և տառը ներկայացնում է ի հնչյունի գիրքային տարբերակը, և ոչ թե ն հնչյունի, ապա՝ այն, որ ուղի-ուղույ և նման ձևերի մեջ հանդես եկող առերևույթ ի> հնչյու- նափոխությունը պետք է բացատրել այլ ձևով։ Մեր կարծիքով, այդ ձևերում էլ առկա է հնա- գույն իւ երկրաբառի սղումով (ի-ի անկումով) ստացված Վ-ն։ Այսպես՝ նույն կարգի բառերի ա հիմքով ձևերի մեջ ունենք եւ, որ ստացվել է հնթ. -iva-ից. նույն ձևով էլ աղ-ը ստաց- վել է -ivo հիմքից, որ պահպանվել է վերջա- վորությունից առաջ։ Ըստ այսմ, որովայն ձևի համար պետք է ենթադրել *portivo-syo հիմ- քը, որ կտար որդիւոյ (ordijov) ձևը, իսկ ու էլ, շեշտափոխության հետևանքով, կդառ- նար ուղ-ւ-ոյ։ Այստեղ էլ, որեմն, ունեցել ենք նույն երևույթը, ինչ որ ունենք, օրինակ, հո- վիւ-հովուր, պատիւ-պատուոյ բառերի մեջ. տարբերությունն այն է միայն, որ այս երկրորդ կարգի բառերն ուղղականում ունեն իւ, որով և պարզորոշ կերպով երևում է հովուի, պա- տուոյ ձևերի կազմությունը, մինչդեռ առաջին- ները (որդի, մարի և այլն) ուղղականում զուրկ են վերջահանգ ու-ից և զուրկ էլ պետք է լի- նենք, իսկ այդ մթաղներ է սեռականի կազմու- թյան ծագումը։ Որ հնթ. -ivo- կապակցու- թյունը հայերենում տալիս է իւ, այդ հայտնի է ուրիշ տվյալներից (համառ. ձիւն, սիւն և այլ բառեր)։ Գա նաև քննելի մի այլ կետ. պա- տիւ, ազնիւ և նման բառերի սեռական-տրա- կանում գրվում է ու (պատուոյ, ազնուի և այլն), մինչդեռ ուղույ, բազուիւյ ձևերում գրվում է Վ։ Մեզ թվում է, թե ուղղագրական այս տարբերությունը հետին երևույթ է. մեռ- րոպյան ուղղագրության ուսումնասիրությունը

ցույց է տալիս, որ բաղաձայնի ու ձայնավորի միջև չէր կարող զրվել ու այդ պիտի ունենար միշտ ու։ Հետևաբար, կամ պետք է կարծել, որ հնում ուղիղ, քաղուհույ և նման ձևերը գրվել են ուղիղ, քաղուհույ և այլն, կամ էլ պետք է մտածել, որ այդ ուղիղ, քաղուհույ ձևերում ից առաջ արտասանվել է ք սույ ձայնավորը։ Կարծում ենք, որ առաջինն ավելի հավանական է, բայց կարիք ունի հետագա րննության ու հաստատման։ Վերջապես, չպետք է կարծել, որ բոլոր լոյ ձևով սեռական-տրական հոլով ունեցող բառերը նախապես ունեցել են -VVO բունը։ Հնարավոր է, որ շատ բառերի վրա դա տարածված լինի համարանություն, ինչպես որ ուշ շրջանի ձևագրերում էլ ունենալիսի սխալագրություններ, ինչպիսիք են մաբուլոյ, զնալոյ և այլն։

Անցնելով հին հայերենի վերջավորությունների ծագմանը, հեղինակը առանձին-առանձին կանգ է առնում բոլոր հոլովական վերջավորությունների վրա, աշխատում պարզաբանել զբանց ծագումը, հենվելով հայագիտական բոլոր հետազոտությունների տվյալների վրա։

Վերջին գլուխը (էջ 225—264) նվիրված է հայերենի հոլովական հիմքերի առաջացման րննությանը։ Հարուստ լեզվական նյութի մանրազնին վերլուծությամբ հեղինակը կարողանում է վեր հանել հնդեվրոպական հիմքերի վերաբերյալ վերջումն են ու փոխանցումները հայերենի ձևավորման պատմական երկարատև պրոցեսում։ Առանձին-առանձին ուսումնասիրելով ձայնավորահանգ, ձայնորդահանգ և խառը (ձայնավորա-ձայնորդահանգ) հիմքերի ու նրանց ենթատեսակների առաջացումը, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ հին հայերենի ձայնավորահանգ հիմքերը ծագում են մասամբ բնավոր, մասամբ էլ անբուն հոլովական տիպերից, ձայնորդահանգ հիմքերը ձևացել են հնիս. անբուն ձայնորդահանգ հոլովման հիմքի վրա, իսկ տարահիմք հոլովումները կամ ներկայացնում են հնդեվրոպական հոլովումների առավել հնատիպ տարահիմք հոլովման տիպերը, կամ էլ առաջացել են հնդեվրոպականից հայերենին անցման պրոցեսում զանազան նշյունաբանական ու ձևաբանական փոփոխությունների հետևանքով։ Այս եզրակացությունները հիմնված են փաստական նյութի խոր վերլուծության վրա և անառարկելի են։

Հավելվածի մեջ (էջ 260—329) հեղինակը բերում է գրաբարյան բառերի ցանկերն ուստ հոլովումների, նշելով նաև հնդեվրոպական ծագումով բառերի նախաձևերը։ Առանձին ցուցակով բերում է համանունների ցանկը՝ տա-

լով նրանց հոլովումը, ինչպես ու՝ րնդունված ստուգաբանությունը։ Այս ցանկերը մեծ արժեք են ներկայացնում ինչպես գրաբարի հոլովման պատկերը պարզելու, այնպես էլ առանձին բառերի հոլովաձևերի ու նրանց պուրահաների առաջացումը ցուցադրական նյութով հիմնավորելու համար։ Այդ ցանկերի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության վրա է հիմնված հեղինակի ամբողջ աշխատությունը։

Գրքին կցված են, ինչպես արդեն ասել ենք, ռուսերեն համառոտ ամփոփում (էջ 368—396), համառոտագրությունների, գրականություն և անունների ցանկեր, որոնք, բնականաբար, պետք է լինեն և զրգի օգտագործումը։

Ինչպես վերի շարադրանքից կարելի է եզրակացնել, պրոֆ. Գ. Ջահուկյանի սույն աշխատությունը հին հայերենի հոլովման համակարգին նվիրված խորահմուտ ուսումնասիրություն է։ Հեղինակը բազմակողմանի, հարուստ գիտելիքներով ու հետազոտական խորաթափանց րննություններով կարողացել է մի հայտարարի բերել, ամփոփել այն ամենը, ինչ կատարվել է այդ բնագավառում շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում և շատ հարցերի մասին էլ իր նոր խոսքը ասել։ Միանգամայն խրախուսելի է հեղինակի րննադատական, բայց ոչ բացասական կամ ժխտողական, վերաբերմունքը եղած փորք ու մեծ ուսումնասիրությունների նկատմամբ։ Դա հնարավորություն է տվել հեղինակին չկաշկանդվելու արդեն րնդունված կարծիքներով և նոր տվյալների րննությամբ, իսկ հաճախ էլ նոր մտաեցմամբ ավելի հավանական կարծիքների հանդելու։ Վերը, առանձին խնդիրների մասին արած մեր պիտողություններին, այնուամենայնիվ, մենք կավելացնենք բնդհանուր բնույթի երկու պիտողություն էլ, որոնք, սակայն, ավելի շուտ ցանկություն են։ Առաջինը վերաբերում է աշխատության լեզվին։ Հեղինակը գրում է շատ ծանր, բարդ լեզվով, որ պժվարացնում է առանց այն էլ խիստ պժվարին նյութի յուրացումը։ Ժիշտ է, դա որոշ չափով պայմանավորված է ուսումնասիրության բովանդակությամբ, բայց հենց դա էլ պետք է թելադրեն հեղինակին հնարավորին չափ պարզ շարադրել իր մտքերը։ Երկրորդը կատարված վերլուծությունների առավելագույն չափով զեպի պատմության խորքերը տանելու մեր ցանկությունն է։ Մեզ թվում է, թե աշխատության մեջ հեղինակը պետք է հաճախ պիմեր ներքին վերականգնումների մեթոդին, որ այնքան արդյունավետ կերպով կիրառվում է վերջին տասնամյակներում՝ պատմա-համեմատական լեզվաբանության մեջ։ Իր պիտելիքներով, իր տեսական-մեթոդաբանական ու մեթոդական մեծ

պարապատությունը պրոֆ. Գ. Ջահուկյանը յիշվին հնարավորություն ունենալով մեթոդն օգտագործելու և ցավալի է, որ չի օգտագործել: Ճիշտ է, նա առանձին զեպրերում կարծես «սարերայնորեն» կիրառում է այդ մեթոդը, բայց մենք իրավունք ունենք շատ ավելին սպասելու նրանից այդ մեթոդի կիրառման մեջ: Ընդունվել է հուսալ, որ իր առաջիկա ուսումնասիրությունների մեջ նա կգիտի այդ մեթոդին ու ավելի լուրջ արդյունքների կհասնի: Ինչ վերաբերում է ներկա մենագրությանը, ապա առանց վերապահության կարող ենք ասել, որ յա լուրջ, մեծարժեք ներգրծում է հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության յնագավառում:

2. Պրոֆ. Հ. Կուսիկյանը իր գրքի² համառոտ առաջարկում խոսում է հայերենի պատմական շարահյուսություն ստեղծելու անհրաժեշտության ու զեպրությունների մասին, ապա, շեշտելով, որ հայերենի շարահյուսության պատմական զարգացմանը նվիրված որևէ ընդհանուր շատ ծավալուն հետազոտություն գեղեսցուններ, բնորոշում է իր աշխատանքը որպես մի փորձ այդ ուղղությամբ: Այնուհետև, առանձին գլխում հեղինակը կանգ է առնում հայոց լեզվի շարահյուսության պատմական ուսումնասիրության խնդիրների ու մեթոդների վրա: Ենչալով, որ լեզվի մեջ պատմական փոփոխությունները տեղի են ունենում աննկատելիորեն, երկար դարերի ընթացքում, հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ այդ բանն առավել ևս վերաբերում է շարահյուսությանը և եզրակացնում, որ պատմական շարահյուսության առաջնահերթ խնդիրն է՝ «ցույց տալ, թե լեզվի հատկապես որ կողմերն են մի շարք դարաշրջանների ընթացքում առավել կայուն, նվազ փոփոխված մնացել և, ընդհակառակը, շարահյուսական ինչ իրողություններ են այս կամ այն չափով փոփոխության ենթարկվել» (էջ 6): Հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ առանձնապես հայերենի շարահյուսության պատմական ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել ոչ միայն բնությունը մատակարարող աղբյուրների ժամանակագրական հաստատությունը, այլև նրանց բնույթը, բովանդակությունը, հաճախ նաև հեղինակի ասարած միջավայրը, տեղը և այլն և այլն, որոնք այս կամ այն չափով կարող են պայմանավորել բնականորեն երկրի շարահյուսական որոշ առանձ-

նահատկություններ: Ընդհանուր առմամբ այս գլխում պրոֆ. Հ. Կուսիկյանը ճիշտ կերպով բնորոշում է ե՛րբ այն խնդիրները, որոնք ծառանում են պատմական շարահյուսության առջև, ե՛րբ այն մեթոդներն ու եղանակները, որոնք պետք է կիրառել հայերենի շարահյուսության պատմական ուսումնասիրության մեջ: Տարակուսանք է հարուցում միայն հայերենի պատմության շրջանարաժանման այն թույլ տեղերը, որ տալիս է հեղինակը գրքի 6-րդ էջում: Այստեղ նա գրում է, որ հայոց լեզվի պատմությունը բաժանում է 5 շրջանի (հնագույն՝ մինչև V դարը, հին՝ V—XII դարեր, միջին՝ XII—XVII դարեր, նոր՝ XVII—XIX դարեր, նորագույն՝ XIX—XX դարեր): Հայտնի է, որ հայոց լեզվի պատմության շրջանարաժանման վերաբերյալ կան մի շարք աշխատություններ, որոնց մեջ առանձին տեղ են գրավում Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» և Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» ծավալուն հոդվածը: Գրքի հեղինակն առանձին բնությունը նշում է իր դարձում այդ խնդիրը և չի էլ նշում, թե ում է հետևում, թեև աշխատության մյուս հատվածներից կարելի է եզրակացնել, որ բնությունում է Հ. Աճառյանի շրջանարաժանումը, իսկ որոշ զեպրերում էլ գործածում Գ. Ջահուկյանի առաջարկած տերմինները:

Բուն աշխատությունն սկսվում է հնագույն հայերենի շարահյուսության ուսումնասիրությամբ: Այստեղ հեղինակը հանգամանորեն բնությունը է առնում այսպես կոչված «վիպառական հայերենի» պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքն առանձին-առանձին, վերլուծելով մեզ հասած հատվածների գրեթե բոլոր նախադասությունները: Այդ բնությունը հեղինակին բերում է այն եզրակացության, որ՝ ա) հնագույն հայերենի կառուցվածքային հատկանիշները ցույց են տալիս, որ շարահյուսական կառուցվածքը պրիմիտիվ բնույթ է կրում. բ) հնագույն հայերենի շարահյուսությունը որոշակիորեն համադրական բնույթ է կրում. «Լեզվի թերական հատկանիշները՝ թերական հոլովումն ու խոնարհումը, նախդիրների ու նախադրությունների առկայությունը՝ լիովին համապատասխանում են շարահյուսական առնչությունների արտահայտման համադրական բնույթին» (էջ 31). գ) «Հոլովական խնդրառությունը բնորոշվում է իր նորմաների միասնականությամբ: Սա առավել ևս անհրա-

² Н. К. Кусикьян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Издательство АН СССР, Москва, 1959, 164 էջ, գինը 83 կ.

³ Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 57, մաս 1 (1956), էջ 49—102:

ժեշտ է նշել, բանի որ հետագա շրջանների լեզվում ուրվագծվում են կանոնների տարբերակումներ, որ բացատրվում է ամենից առաջ տեղական բարբառների երևան գալով: Քանի որ հնագույն վիպասանության լեզվում արտացոլվել է թվական տեսակետից համեմատաբար փոքր յոգովորդի լեզուն, ապա խնդրառության նորմաներին էլ հատուկ էր միասնությունը» (էջ 33): Գ) Հասարակ նախադասության կառուցվածքի հնագույն շրջանի էական հատկանիշները հիմնականում պահպանվել են մինչև մեր օրերը (էջ 16): Այս եզրակացությունները միանգամայն ճիշտ են և հիմնված են փաստական նյութի դիտական վերլուծության վրա: Պետք է նշել, սակայն, որ այդ գլխում կան նաև մի շարք անճշտություններ. այսպես, վերլուծելով «Խա հուր հեռ ունէր» նախադասությունը, պրոֆ. Հ. Կուսիկյանը այն կարծիքն է հայտնում, թե «ունէր բայը, որ արտահայտում է ստորոգյալը, կարելի է գիտել որպես երբեմն գոյություն ունեցած հանգույց: Դրա մասին է խոսում նրա ձևաբանությունը, որը ցույց է տալիս, որ այդ բայի հիմքը՝ ուն ← ոյն իրենից ներկայացնում է էական բայի հիմք» (էջ 15): Այս բացատրությունը ճիշտ չէ. ունիմ բայը օրինաչափորեն ծագում է հնխ. ԾՐ- արմատից, որ նշանակել է «բռնել, ձեռք բերել» և, հետևաբար, ոչ թե էական բայի իմաստ է ունեցել, այլ գործողության՝ բռնելու, ձեռք բերելու (հմտա. ստ'նս. ἀρᾶσθαι «ձեռք բերել», լատ. ariscor «շահել, ձեռք բերել, հասնել» են⁴): Ոյն արմատը, որ գործածված է ուշ շրջանի մատենագրության մեջ, շինծու ձև է և սարքված է հունարենի հետևողությամբ: Այս սխալից ինքնին բխում է նաև երկրորդ սխալը. 26-րդ էջում, խոսելով անվանական Նախադասությունների մասին, իրեն այդ կարգի նախադասության օրինակ բերում է վիպասանության հետևյալ հատվածը. Երկնէր Երկին, Երկնէր Երկիր, Երկնէր և ծովն ծիրանի. Երկն ի ծովուն ունէր... Նա հուր հեռ ունէր, բոց ունէր սաւրուս, աշկունքն էին արեգակունք: Այս օրինակները բերելով, նա գրում է. «Արտաբնույտ բայական թվադր ձևերն իրականում հանգույցի ու անվան միացումն են: Այն, ինչ որ այժմյան հայեցակետով մի ամբողջություն է կազմում, իրականում բաղկացած էր անունից ու հանգույցից, օրինակ, Երկնէր, որը կազմված էր Երկն բառից և Եր հանգույցից («Երկունքի ցավեր» և «Կար»)»: Սա երևում է նրանից, որ Երկն ի ծովուն ունէր նախադասության մեջ Երկն

բառը բաժանված է ունէր բայից: Ի դեպ, ունէր բայը տվյալ դեպքում բոտ կոթյան հանգույց է, եթե նկատի ունենանք, որ այդ բայը կազմվել է ոյն-ոյն էական բայի գերբայական ձևից ու հանգույցից, այսինքն՝ նա նշանակել է «գոյություն ունեցող եմ» (ուն-եմ): Այդ կարելի է հասկանալ բայի ժամանակակից ձևից՝ ունէրում եմ, բառացի թարգմանությամբ՝ «գտնվում եմ գոյության մեջ»: Այսպիսով՝ Երկնէր Երկին նշանակում է «Երկունքի ցավեր էին Երկիրին»: Այդպես էլ պետք է հասկանալ Երկնէր Երկիր, այսինքն՝ Երկն Երկիրն, «Երկունքի ցավեր էին Երկիրին»: Երկն ի ծովուն ունէր նախադասությունը պարզորեն ցույց է տալիս, որ նրանում հաստատվում է վիճակ՝ Երկն ի ծովուն «ծովի երկունքի ցավեր»: Ունէր բառն էլ կատարում է «վիճակ կար» նշանակությամբ հանգույցի դերը V դարի բնագրերում ունիմ նշանակում է «ունենալ, բռնել, վերցնել»: Բայի այդպիսի իմաստով Երկն ի ծովուն ունէր նախադասությունը չէր կարելի հասկանալ: Հետևաբար ունէր կատարում է հանգույցի դերը... Այսպիսով, հիշված անվանական նախադասությունների մեջ հանգույցները ներկայացված են մերթ անվանը միացած (Երկն էր), մերթ էական բայի արմատի ձևով՝ հանգույցի հետ միացած (ուն էր), մերթ ինքնուրույն (Եր և էին): Նախադասության անվանական տիպը՝ հանգույցի առկայությամբ, կարելի է համարել պարզ նախադասության առավել հնագույն տեսակը» (էջ 26): Այս հատվածի բոլոր վերլուծությունները, ցավոք սրտի, զուրկ են իրական հիմքից: Երկնէր Երկին չի նշանակում «Երկունքի ցավեր էին Երկիրին», այլ պարզապես՝ Երկիրը երկնում էր, նույնպես և՛ Երկնէր Երկիր՝ «Երկիրը երկնում էր». աշխարհաբարի ազդի հարմար թվացող թարգմանությունը՝ «Երկիրը երկունքի մեջ էր, երկիրը երկունքի մեջ էր» չի կարող որոշիչ լինել այդ նախադասությունների բնույթը սահմանելու համար: Հին հայերենի կառուցվածքում Երկնէր պարզ ստորոգյալ է և ոչ թե բաղադրյալ՝ կազմված անվան ու հանգույցի միացումով: Այդ սխալ բնորոշումից ելնելով, հեղինակը գտնում է, որ ունիմ բայի գրաբարյան (V դարի) իմաստով չի կարելի հասկանալ Երկն ի ծովուն ունէր նախադասությունը, որ, իր կարծիքով, պետք է թարգմանել «ծովի երկունքի ցավեր». այդ է սխալման ահա, որ նա ամբողջ նախադասությունն էլ սխալ է թարգմանում: Երկն ի ծովուն ունէր և գլաւմբիկն Լեղեղենն նախադասությունը պետք է թարգմանել «Երկունքը ծովի մեջ բռնել էր (= պատել էր) և (— նաև) կարմրիկ Լեղեղենի», մինչդեռ նա թարգմանում է. «Ծովը եր-

⁴ Հ. Կուսիկյան, Որմ. բառ., հատ. Ե, էջ 649—650:

կունքի ցավերի մեջ էր կարմրիկ եղեգնիկին ծնելիս—было море в муках родни, рождая красненький тростничок» (էջ 17). ստացվում է այնպես, որ ծովը ծնել է եղեգնիկ, մինչդեռ Վահագնի երգի մեջ ասվում է, թե երկունքի մեջ էին, երկունքի ցավերով էին բռնված ու երկնում էին երկինքն ու երկիրը, ծիրանի ծովը և նույնիսկ՝ եղեգնիկը ծովի մեջ: Այս բոլոր անճշտությունները, բնականաբար, տներդունելի էլ եզրակացության են հանգեցնում. հեղինակի կարծիքով, վիպասանական հատվածների տվյալները մտածել են տալիս. թե նախադասության անվանական կառուցվածքը հասարակ նախադասության առավել հնագույն տեսակն է: Մենք չենք առարկում այդ սկզբունքի դեմ ընդհանրապես, բայց վիպասանական հատվածների մեջ ոչ մի հիմք չկա այդ եզրակացության համար. մենք վիպասանական 14 հատվածների մեջ գտանք միայն մեկ անվանական նախադասություն, որ է՝ եւ աշկունքն էին աբեգալիւնք:

Հաջորդ գլուխը (էջ 35—92) ամբողջությամբ նվիրված է V դարի մատենագրության լեզվի շարահյուսության ուսումնասիրությանը: Հայոց լեզվի զարգացման՝ V դարի պատմահասարակական պայմանների համառոտ ակնարկից և շարահյուսության ուսումնասիրության աղբյուրների տեսությունից հետո հեղինակն անցնում է պարզ նախադասության մանրամասն վերլուծությանը. այստեղ քննության են առնվում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ ենթական ու ստորոգյալը, հոլովների կիրառությունը, դիմորոշ հոգերը, զ նախդրի կիրառությունները, բայի կիրառությունները, որոշիչն ու նրա տեսակները, պարագաները և այլն: Այս բոլոր հարցերը հեղինակը ուսումնասիրում է փաստական հարուստ նյութի վերլուծությամբ և, ընդհանուր առմամբ, ճիշտ եզրակացությունների հանգում: Առանձին հատված է նվիրում V դարի մատենագրության լեզվի մեջ բարբառային երևույթների թափանցման վրա, առանձնապես նկատի ունենալով շարահյուսական տվյալները: Հեղինակի կարծիքով, Կորյունի դպրոցը ներկայացնում է յուրահատուկ լեզու ոչ թե ոճաբանական տեսակետից, ինչպես կարծում են հայագետներից ոմանք. այլ բարբառային-ժողովրդական լեզվի իրողությունների լայնորեն շատագործման տեսակետից: Ցավոք սրտի, հեղինակն իր դատողությունները հիմնավորում է միայն մի երկու դարձվածքների օրինակով (որոշ անուն ճանաչելու...), իբրև տեսակ...), մինչդեռ անհրաժեշտ էր ավելի շատ տվյալներ օգտագործել այդպիսի ծանրակշիռ եզրակացության համար: Վեր-

ջապես, առանձին հատվածներում համառոտակի խոսում է նաև հունարան դպրոցի և V դարի երկրորդ կեսի մատենագրության լեզվի շարահյուսական երևույթների մասին: Այս գլխի մեջ հեղինակը առանձին քննության առարկա չի դարձրել բարդ նախադասության շարահյուսությունը թեկուզ և ընդհանուր գծերով, որ, իհարկե, անհրաժեշտ էր: Առանձին հարցերի վերաբերյալ արտահայտված կարծիքներից մենք քննության կառնենք հետևյալը. խոսելով որոշիչի ու որոշյալի շարադասության մասին, հեղինակը գրում է. «Գրավոր հուշարձանների մեջ կարելի է նկատել, սկսած V դարից, որոշիչը որոշյալից հետո դնելու ձգտում: Այդ ձգտումն աստիճանաբար վեր է ածվել նորմայի այն շրջաններում, երբ հին հայերեն գրական լեզուն սկսեց ետ մնալ կենդանի լեզվից» (էջ 68): Բր ասածը հաստատելու համար հեղինակը բերում է երկու նախադասություն՝ Եզնիկից, որոնցից առաջինում բոլոր որոշիչները ետագաս են, իսկ երկրորդում՝ նախադաս, և եզրակացնում, թե նույն V դարում որոշիչը նախորդում է որոշյալին որպես ընդհանուր կանոն, որպես նորմա: Այս տեսակետին, իհարկե, դժվար է համաձայնել. բանն այն է, որ V դարում, հատկապես դրա սուսջին կեսի մատենագրության մեջ, ավելի գերակշռող և որպես ընդհանուր օրինաչափություն հանգես եկողը որոշիչի ետագաս գործածությունն է: Նախադաս գործածությունը V դարի լեզվում թեև բավականաչափ արդեն ծավալված, բայց համեմատաբար նոր երևույթ էր. նա սաղմնավորվել էր շատ վաղուց, և վիպասանական հատվածներում արդեն գտել է իր արտահայտությունը (օր. զկարմրիկն եղեգնիկ, խարտեաչ պատանեկիկ, հուր հեր ևն): Հետագայում անշուշտ աստիճանաբար նա զարգացել, ծավալվել էր, այնպես որ V դարում արդեն որոշակիորեն հանդես է գալիս իբրև ձևավորվող օրինաչափություն: Տվյալ դեպքում մենք վկա ենք երկու իրար հակադիր, միմյանց բացասող, բայց զեռես կողք կողքի գոյություն ունեցող ու իրար բախվող օրինաչափությունների պայթարին: Մեկը հին, իր դարն ապրած, դեպի մահացում գնացող օրինաչափություն է. մյուսը՝ նոր, զարգացող, աստիճանաբար ավելի ու ավելի ծավալվող ու հետագայում արդեն ընդհանրացող օրինաչափություն: Հետագա դարերում, երբ գրաբարի ու կենդանի խոսակցական լեզվի միջև անջրպետությամբ բավականաչափ խորացել էր, այդ շրջանի հեղինակները ձգտում էին դրել նախնիների նման, ընդօրինակել V դարի հեղինակների լեզուն և նրանց նետողությամբ էլ գերադասում էին որոշիչի ետագաս

գործածությունը: Սրանց մոտ մենք ունենք արհեստականորեն ստեղծված երևույթ, մինչդեռ առաջինների՝ V դարի հեղինակների մոտ՝ այսպես ասած՝ բնական վիճակ: Տարբեր դարաշրջաններ, տարբեր էլ երևույթներ:

Հաջորդ երեք գլուխներում հեղինակը քննության է առնում գրաբարի շարահյուսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները VI—XII դարերում, միջին հայերենի շարահյուսական կառուցվածքի հիմնական դժերը, ապա՝ ժամանակակից հայերենի (արևելահայ գրական լեզվի) շարահյուսության կարևորագույն օրինաչափությունները: Այս բոլոր խնդիրներն էլ հեղինակն ուսումնասիրում է գրավոր հուշարձանների լեզվական հարուստ նյութի վերլուծությամբ, պատմական պրոցեսի բազմակողմանի հաշվառումով: Պետք է շեշտել հատկապես, որ հայոց լեզվի պատմության այս կամ այն փուլի լեզվական իրողությունների քննությանն անցնելուց առաջ պրոֆ. Հ. Կուսիկյանը համառոտակի քննությամբ է սոցիալ-պատմական այն գործոնները, որոնք հիմք են հանդիսացել կենդանի ժողովրդական լեզվի իրողությունները՝ գրական լեզվի մեջ թափանցելուն, ժողովրդական լեզվով գրելուն կամ, բնդհակառակն, դրանցից խուսափելուն և այլն: Այս բոլորը հնարավորություն են տալիս բնդհանուր դժերով ձիշտ քննորոշելու հայոց լեզվի զարգացման պատմական պրոցեսը և ձիշտ կերպով գնահատելու այս կամ այն շրջանի լեզվական երևույթները:

Վերջին գլխում, որ վերնագրված է «Լիքի քանի բնդհանուր դատողություններ հայոց լեզվի շարահյուսության զարգացման պրոցեսի վերաբերյալ», հեղինակն ամփոփում է իր ուսումնասիրության արդյունքները և տալիս հայոց լեզվի շարահյուսական կառուցվածքի պատմական զարգացման պրոցեսի բնդհանուր քննությամբ: Հեղինակը ձիշտ կերպով գտնում է, որ հայոց լեզվի շարահյուսության զարգացման պրոցեսը կարելի է քննությամբ ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունների կառուցման ավելի ու ավելի մեծ նկունության, առավել կատարելագործման բնդհանուր տենդենցով:

Իրրին կցված է օգտագործված աղբյուրների բնդարձակ ցանկ:

Պրոֆ. Հ. Կուսիկյանի այս մենագրությունը ձիշտ գնահատելու համար պետք է նկատի ունենալ, որ գա միակն է իր տեսակի մեջ, առաջին փորձը՝ հայերենի պատմական շարահյուսություն ստեղծելու ուղղությամբ: Սա բնականաբար խիստ դժվարացնում է գործը, և հենց այդ է պատճառը, որ հեղինակը շատ համեստ

խնդիր է դրել իր առջև՝ փորձել «հայերենի շարահյուսության զարգացման ուրվագծերը նշել, նրա առանձին կողմերն ուրվագծել պատմական ասպեկտով» (էջ 3): Եվ շնայած այս համեստ քննությամբ, աշխատությունը հայերենի պատմական շարահյուսության համառոտ, բայց հաջողված ուսումնասիրությունն է: Իր այս մենագրությամբ պրոֆ. Հ. Կուսիկյանը հայոց լեզվի պատմության մի ճյուղի գիտական մշակման հաստատուն հիմքն է գնում: Այս տեսակետից, այլև նյութի գիտական մշակման տեսակետից մենագրությունը լուրջ ներդրում է հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում:

Բայց նրա արժեքը միայն դրանով չի սպառվում. մեկուկես հազարամյակի հարուստ գրական հուշարձաններով ափանդված հայոց լեզվի պատմական շարահյուսության ամբողջական ու սպառիչ ուսումնասիրությունը վեր է մեկ մարդու ուժերից. դրանով դեռ շատ ու շատ մասնագետներ պետք է գրադվեն: Պրոֆ. Հ. Կուսիկյանն այս աշխատությամբ, ահա, ոչ միայն կարևոր նյութ է տալիս դրա համար, այլև քննորոշում այն հիմնական մեթոդներն ու եղանակները, որոնք պետք է գործադրվեն այդ առարկայի ուսումնասիրության մեջ, առաջադրում այն հիմնական խնդիրները, որոնցով պետք է գրադվեն մասնագետները և նշում այն հիմնական ուղիները, որոնցով պետք է քննադատնա առաջիկա ուսումնասիրությունները: Այս տեսակետից, այս մենագրությունը ոչ միայն հայոց լեզվի պատմական շարահյուսության ամփոփ ուրվագիծն է, այլև այդ կարգի ուսումնասիրությունների ծրագիրն ու ուղեցույցը: Բնական է, որ այսպիսի մի գործի մեջ կարող են լինել նաև որոշ վրիպումներ, անճշտություններ ու վիճելի կարծիքներ, որոնցից մի քանիսի վրա կանգ առանք, բայց դրանք երկրորդական նշանակություն ունեն, և բնդհանուր գնահատականը շեն կարող փոխել:

3. Հայոց լեզվի զարգացման միջին շրջանի հնչյունաբանության բնդարձակ ուսումնասիրությունն է Ս. Ղազարյանի «Լիքին հայերեն» գրքի առաջին հատորը: Բնդարձակ առաջարանում հեղինակն արժարծում է միջին հայերենի բազմակողմանի ուսումնասիրության հարցերը, համառոտակի քննությամբ այդ ուղղությամբ կատարված հետազոտություններն ու գնահատում առանձին հայադետներին վաստակներն այդ բնագավառում: Բուն աշխատանք

Ս. Ս. Ղ. Ղազարյան, Լիքին հայերեն, գիրք Ա, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960, 303 էջ, դիրք 94 կ.:

րը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը՝ ներածական մասը (էջ 17—64) նվիրված է գրաբարի բնորոշ գծերի համառոտ նկարագրությանն ու նրա կառուցվածքի փոփոխություններին՝ V—X դարերում, իսկ երկրորդը (էջ 67—290) ներկայացնում է միջին հայերենի կազմավորման պատմա-հասարակական նախադրյալների, մշակույթի զարգացման մեջ պրակտիկ ճանաչողական, միջին հայերենի կազմավորման, միջնադարյան հայ գրականության լեզվական առանձնահատկությունների և վերջապես, միջին հայերենի հնչյունական համակարգի ընդարձակ ուսումնասիրությունը։ Առաջին գլխի մի վերջին հատվածում հեղինակն ամփոփում է իր հետազոտության արդյունքները։ Գրքին կցված են համառոտագրությունների, անունների, օգտագործված գրականության ցանկեր։

Ուսումնական շրջանում միջին հայերենով պետք է ունենան բիշ ևն եղել. բացի Հ. Աճառյանից, որն իր «Հայոց լեզվի պատմություն», «Արմատական բառարան» և «Լիակատար բերականություն հայոց լեզվի» աշխատությունների մեջ ընդգրկել է հարուստ փաստական նյութ միջին հայերենի վերաբերյալ և լեզվաբանական խոր վերլուծության ենթարկել այն, մեր լեզվաբաններն անդրադարձել են միջին հայերենին մեծ մասամբ թուրքիկ կերպով և կողմնակիորեն։ Պրոֆ. Ս. Ղազարյանը երկար տարիներ նվիրել է միջին հայերենի հատուկ ուսումնասիրությանը և, օգտագործելով այն ամբողջ նյութը, որ ամփոփված է հայագիտական գրականության մեջ շուրջ մեկ հարյուրամյակի հետազոտություններով ու ավելացնելով իր սեփական պրակտիկական և թեորետիկական արդյունքներով ձեռք բերած նյութը, տվել միջին հայերենի հնչյունական համակարգի բազմակողմանի պատմական ու նկարագրական-համաժամանակյա գիտական բնութագրությունը։ Աշխատությունը հիմնված է տեսական ճիշտ սկզբունքների ու պատմական մոտեցման վրա, ուսումնասիրության մեթոդը պատմահամեմատական մեթոդն է։ Այդ բոլորով էլ պայմանավորված են ուսումնասիրության բարձր մակարդակը և արդյունքների լրջությունը։

Այստեղ մենք հնարավորություն ունենք մանրամասնորեն կանգ առնելու գրքում արձանագործված բոլոր հարցերի վրա, ուստի՝ կսահմանափակվենք մի քանի վիճելի հարցերի մասին խոսելով, ինչպես և առանձին, մասնակի բնույթ կրող անճշտությունների նշումով։

Հայոց լեզվի պատմության կարևոր պրոբլեմներից մեկն է այն խնդիրը, թե միջին հայերենը մի միասնական լեզու է և՛ չէ, թե՛ ամբողջությունը բարբառային մի քանի ճյուղերի

17 Հանդես. № 1

ու բազմաթիվ բարբառների, որոնցից մեկը՝ Կիլիկիայի բարբառը, բարձրացավ գրական ու պաշտոնական լեզվի աստիճանին։ Այս հարցին տարբեր հայագետներ տարբեր պատասխան են տալիս. ոմանք գտնում են, որ եղել են մի քանի «միջին հայերեններ», ոմանք էլ, ընդհակառակը, գտնում են, որ եղել է մեկ միջին հայերեն, և այսպես կոչված կիլիկյան հայերենը հենց այդ ընդհանուր միջին հայերենի մի դրսևորումն է պատմական որոշ դարաշրջանում։ Առաջին տեսակետը իր ծայրահեղ ներկայացուցիչն է ունեցել ի դեմս Յ. Կարստի, որ մեր միջնադարյան ողջ գրականության լեզուն համարում է կիլիկյան հայերենը՝ կապելով Կիլիկիայի բարբառի հետ։ Երկրորդ տեսակետն իր ծայրահեղ արտահայտությունն է գտնում պրոֆ. Ս. Ղազարյանի սույն աշխատության մեջ։ Դիշտ կերպով բնագատելով առաջին տեսակետը, գրքի հեղինակը գրում է. «Մենք չենք պաշտպանում այն լեզվաբանների տեսակետը, որոնք գտնում են, թե եղել են տարբեր միջին հայերեններ, թե միջին հայերենի այդ տարբեր ձևերից մեկը՝ կիլիկյան բարբառը գրականության աստիճանի բարձրացավ և պահպանվեց, իսկ մնացած ձևերը գրի չառնվեցին ու չհասան մինչև մեր ժամանակները։ Մեր կարծիքով միջին հայերենը Կիլիկյան հայկական թագավորությունից առաջ իր հիմնական արտահայտություններով ուրվագծված էր, հետևաբար կիլիկյան բարբառը չէր, որ գրական լեզվի աստիճանի բարձրացավ, թեև նա իր որոշ իրողություններով ներթափանցեց գրական լեզվի սահմանները... Միջին հայերեն տերմինի տակ մենք հասկանում ենք X—XVII դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությունում ավանդված լեզվական այն բաղադրանքները, որոնք ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին» (էջ 92—93)։ Այս կարծիքին կարելի է համաձայնել մի շարք վերապահումներով և, մանավանդ, որոշ ճշտումներից հետո։ Ամենից առաջ՝ միջին հայերենի մասին ընդհանրապես, Հեղինակի կարծիքով, միջին հայերենը X—XVII դարերի մատենագրության լեզուն միջին հայերենը չէ, այլ գրաբարը, և այն էլ խրճաբան գրաբարը։ Կարելի է ընդունել, իհարկե, որ գրականության աստիճանին բարձրանալուց առաջ, միջին հայերենն արդեն խոսակցության մեջ իշխում էր, բանավոր հաղորդակցման ընդհանուր միջոցն էր. բայց չէ՞ որ խոսքն այսուհեղ վերաբերում է

ոչ թե խոսակցական լեզվին, այլ մատենագրության մեջ այդ լեզուն դեռ չկական միայն նրա առանձին երևույթները՝ քերականական, բառային, հնչյունական առանձնահատկությունների ոչ ընդհանուր բնույթ կրող արտահայտությունները։ Այդ դարերը կարելի է համարել միջին հայերենի նախապատրաստման կամ նույնիսկ կազմավորման շրջան, բայց ոչ բուն միջին հայերենի, այսինքն՝ արդեն ձևավորված լեզվի շրջան։ Սեր ասածն ավելի շոշափելի օրինակով հիմնավորելու համար մենք կդիմենք աշխարհարարի պատմությանը։ Հայտնի է, որ աշխարհարարի ձևավորման շրջանն է համարվում XVII դարից մինչև XIX դարի կեսերը, բայց մենք չենք կարող ասել, թե, օրինակ, արևելյան գրական լեզուն ընդգրկում է XVII դարից մինչև մեր օրերը ձգվող մամանակաշրջանը։ Չրովհետև նախ՝ այլ բան է լեզվի ձևավորման, նրա գոյացման շրջանը և այլ՝ երբ նա արդեն ձևավորվել է իրեն նոր որակ, երկրորդ՝ այլ բան է արևելյան աշխարհարար, ընդհանրապես, և այլ՝ արևելահայ գրական լեզուն։ Այսպիսով, մենք գտնում ենք, որ միջին հայերենի ժամանակաշրջանը պետք է սահմանափակել XI—XVII դարերով։ Այնուհետև, պրոֆ. Ս. Ղազարյանի այն պնդումը, թե միջին հայերենը կիլիկյան բարբառը չէր, այլ մի ընդհանուր լեզու, կարելի է ընդունել որոշակի վերապահությամբ։ Այստեղ ամենից առաջ անհրաժեշտ է մի պարզություն մտցնել։ Հեղինակի այդ պնդումը հիմնված է այն փաստարկի վրա, որ միջնադարի մատենագրության լեզուն «հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածների համար», բայց հասկանալիությունը միշտ չէ, որ նարող է լեզվի ընդհանրության ու միասնության չափանիշը լինել։ արևմտահայ գրական լեզուն հասկանալի է ամբողջ հայության համար, բայց նա ընդհանուր ու միասնական լեզու չէ։ մենք ունենք մեկ ազգային լեզու՝ իր երկու թև՝ գրական, և թև՝ բանավոր գրականություններով։ Հարց է առաջանում, թե միջնադարում էլ այդպիսի վիճակ գոյություն չունե՞ր արդյոք։ Մեր կարծիքով հեղինակի տեսակետը ճիշտ է։ XI—XIV դարերի վերաբերյալ այդ շրջանում միջին հայերենը, թեև տարբեր բարբառների առկայության պայմաններում, դեռևս համեմատաբար ավելի միասնական էր։ համեմայն դեպ, XII—XIII դարերում դեռևս որոշակիորեն չէր ձևավորվել քերականական կառուցվածքի ամենալական տարբերություններից մեկը՝ բայի

ներկայի ու անցյալ կատարյալի կազմության տարբերությունը։ Երկրորդ տվյալները խոսում են այն մասին, որ այդ դարերում Վու մասնիկով ներկայի կազմությունը դեռևս որոշակիորեն չէր տեղայնացել։ այդ են ապացուցում թե մատենագրության, թև՝ հիշատակարանների ու վիմական արձանագրությունների, և թև՝ բարբառների տվյալները։ Այս տեսակետից խիստ կարևոր է այն փաստը, որ մեր Ում ճյուղի բարբառներում Վր մասնիկով բայաձևը դեռևս գործածվում է ներկայի (պատմական ներկայի) իմաստով՝ հատկապես հերիաթների մեջ։ Այս նույն շրջանում կային, իհարկե, նաև որոշ տարբերություններ Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների ընդհանուր-խոսակցական լեզվում։ այդ տարբերություններն առանձնապես մեծ էին հնչյունական համակարգի մեջ։ XII—XIII դարերում արդեն որոշակիորեն տեղայնացել էին այսպես կոչված արևելյան և արևմտյան արտասանական առանձնահատկությունները։ Քանի որ միջին դարերի կենդանի լեզուն գրականության աստիճանին բարձրացավ Կիլիկյան թագավորության դարաշրջանում և հենց Կիլիկիայում, ապա դա էլ պայմանավորեց այդ գրական լեզվի մեջ արևմտյան խոսակցական լեզվի առանձնահատկությունների գերակշռությունը։ Ուստի և այդ շրջանի համար մենք կարող ենք ընդունել ընդհանուր միջին հայերեն գրական լեզուն՝ արևմտահայ խոսակցական լեզվի առանձնահատկությունների զգալի ներթափանցումներով։ Այդ բանը, համեմայն դեպ, բացահայտորեն գերակշռում է հնչյունական համակարգի մեջ այնպես, որ կարող ենք ասել, թե տառադարձությունն ամբողջապես հիմնված է Կիլիկյան արտասանության վրա, բայց որում Կիլիկյան տերմինն այդ շրջանի վերաբերյալ պետք է գործածել ավելի լայն առումով, դրա տակ հասկանալով արևմտահայ բարբառների գոնե մեծագույն մասի ամբողջությունը։ Ինչ վերաբերում է XV—XVII դարերին, ապա այդ շրջանում գրությունը այլ է։ այստեղ աստիճանաբար ուժեղանում է երկու հակադիր երևույթների բախումը, որ վերջապես հանգում է նոր հայերենի երկու ճյուղերի ձևավորմանը՝ հետագա դարերում Կիլիկյան շրջանը բնորոշվում է ոչ միայն այդ ժամանակի բանավոր լեզուն գրականության աստիճանին բարձրացնելով, այլև այդ գրական լեզվի որոշ նորմավորումով։ այս հարցում մենք միանգամայն համերաշխ ենք պրոֆ. Գ. Զահուկյանի հետ, որը XII—XIV դարերը համարում է միջին հայերենի «Կիլիկյան նորմավոր-

ման ենթաշրջան⁶։ Ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում գրական ու պետական-պաշտոնական լեզվի ֆունկցիան կատարող լեզուն իր նորմաներով ավանդարար պահպանվում էր նաև Կիլիկյան թագավորության անկումից հետո, բայց դրան հակադրվում էր խոսակցական լեզվի մեջ արդեն որոշակի կերպով դրսևորվող երկփեղկումը։ Բարբառների ավելի ու ավելի խորացող տարբերություններն ու նորանոր տարբերակումները, բնականաբար, դրան նպաստող հիմնական գործոններն էին, իսկ դրանք էլ, իրենց հերթին, պայմանավորված էին պատմա-հասարակական նոր պայմաններով։

Այսպիսով, XV—XVII դարերի մատենագրության լեզվում նկատվում են, մի կողմից նախորդ շրջանի գրական լեզվի ավանդության ուժը, մյուս կողմից արևելյան հատվածի ընդհանուր-խոսակցական լեզվի երևույթների, ինչպես և զանազան բարբառային երևույթների աստիճանաբար հաճախացող ու ծավալվող ներթափանցումները, սրանց զուգահեռ, նկատվում է նաև ղեպի դարբարը դարձ կատարելու տենդենցը։ Այս պայմաններում, բնականաբար, մեկ միջին հայերենի մասին խոսք լինել չի կարող արդեն։

Պրոֆ. Ս. Ղազարյանի աշխատության բերած կարևոր նորությունն է այն, որ նրա մեջ ճիշտ կերպով բնորոշված է Անիի ղեպը նոր լեզվի, ինչպես և առհասարակ մշակույթի բոլոր բնագավառների զարգացման մեջ։ Բոլոր հեղինակը չի բավարարվում առանձին լեզվական փաստերի մեջբերումով, ինչպես այդ արվել է մինչև այժմ, այլ դրանց վրա հենվելով ցույց է տալիս Անիի նշանակությունը նոր լեզվի կազմավորման մեջ։ Մեր կարծիքով, սակայն, նա կանգ է առնում կես ճանապարհին։ Շատ շնորհակալ աշխատանք կատարած կլինեիր հեղինակը, եթե XV—XVII դարերի լեզվական տվյալների ուսումնասիրությամբ վեր հաներ արևելյան աշխարհագրի հիմքերը։ Այսպիսի ուսումնասիրությունը անխուսափելիորեն կհանգեցներ արևելյան աշխարհագրի կազմավորման տեսությունների վերանայմանը։ Ինչպես հայտնի է, հայագիտության մեջ այժմ ընդունված է այն կարծիքը, որ արևելյան աշխարհագրի հիմքում ընկած է հիմնականում արաբաշառանքային Պատմական տվյալները, սակայն, այլև առանձնապես Անիի վիճակն արձանագրություններ մեզ բերում են այլ եզ-

րակացության։ Մենք գտնում ենք, որ արևելյան աշխարհագրար XII—XIII դարերի ընդհանուր-խոսակցական միջին հայերենի աստիճանական ճյուղավորումով առանձնացած Արևելյան Հայաստանի ընդհանուր խոսակցական լեզուն է, որ իր հիմնական գծերով հանդես է գալիս արդեն XV—XVI դարերում։ Այդ ընդհանուր լեզուն ծառայում էր որպես հաղորդակցման միջոց Արևելյան Հայաստանի գրեթե ամբողջ տեղիորդությանը՝ Անիում և իր շրջակայքում, Արաբաշառանքի գաղտնավայրում և նրան հարող լեռնային շրջաններում, Շիրակի գաղտնավայրում, Լեռնային Ղարաբաղում ու ամբողջ Զանգեզուրի մեծագույն մասում (Աղուլիսի և Մեղրու շրջանի մի մասի բացառությամբ), հավանաբար նաև պատմական Երուզարքի տեղիորդությանը։ Այդ բանը հեշտությամբ կարելի է հաստատել այն փաստով, որ հիշյալ տեղիորդաներում, եթե ավելի ուշ շրջանում տեղի ունեցած գաղթերով ներմուծված բարբառները հանենք, կունենանք հիմնականում Արաբաշառանքի ու Ղարաբաղի բարբառները՝ իրենց ճյուղավորումներով, որոնցից մի բանիսր հետագայում վեր են ածվել ինքնուրույն բարբառների։ Այդ են ասում հիշյալ տեղիորդաների վիճակն արձանագրությունների, և առաջին հերթին՝ Անիի XV դարի արձանագրությունների լեզվական տվյալները։ Ինչ վերաբերում է արաբաշառանքի, ապա նա ոչ թե արևելյան աշխարհագրի հիմքն է, այլ մեր նշած արևելյան ընդհանուր խոսակցական լեզվի մի բարբառը, որ հայտնի պատճառներով ավելի հարազատ է մնացել, ավելի րիչ է հեռացել նրանից, բան, ասենք, Ղարաբաղի բարբառը։ Կարծում ենք, որ պրոֆ. Ս. Ղազարյանը գրքի հաջորդ մասերում ավելի մեծ ուշադրություն կդարձնի այս հարցի վրա և իր կուտակած լեզվական հարուստ տվյալների, մանավանդ բերականական իրողությունների բազմակողմանի վերլուծությամբ իր վճռական խոսքը կասի։

Ինչպես ասացինք, հատորի բուն նյութն է կազմում հնչյունաբանությունը, այստեղ էլ, ընդհանուր առմամբ, հեղինակը շատ հանգամանալից վերլուծություններ է կատարել և ընդգրկել գրեթե բոլոր հնչյունափոխական երևույթները։ Սակայն, մեր կարծիքով, աչքաթույլ է արված մի կարևոր խնդիր, այն է՝ միջին հայերենի նշույթային համակարգի քննությունը։ Հեղինակը, ելնելով իր ընդհանուր սկզբունքից, միջին հայերենի հնչյունական համակարգը գիտում է իբրև մի ընդհանուր, միասնական համակարգ։ Այսպիսի մոտեցումը կարող է արդարանալ միայն հնչույթաբանական տեսանկյունից, կարելի է անվիճելի հա-

6 Տե՛ս Գ. Բ. Ջա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը, Երևանի Պետ. համալսարանի դիս. աշխատություններ, հատ. 57, մաս 1 (1956), էջ 81։

մարել, որ թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան (Կիլիկյան) հատվածների խոսակցական լեզվում եղել է հնչյութային, մանավանդ պայթականների, միևնույն համակարգը, ըստ որում պայթականների համար ունենք եռանդամ հակադրության սխեմա (բ:պ: փ): Ինչ վերաբերում է հնչյուններին և, մանավանդ, հնչյունափոխական երևույթներին, ապա այստեղ դրությունը բոլորովին այլ է, Կիլիկյան եռանդամ հակադրությունն ստեղծվել էր հին հայերենի պայթականների առաջին երկու շարքերի տեղափոխությամբ (բ>պ, պ>բ), մինչդեռ արևելյան հատվածի սխեմայում պահպանված էր հին հայերենի համակարգը գրեթե անփոփոխ կերպով, թեև հնչյունային տեսակետից այստեղ էլ ունենք արդեն բառասկզբի ձայնեղների շնչեղացումը կամ, դոնե, ուժղեացումը: Հնչյութային համակարգի վերլուծությունը հեղինակին հնարավորություն կտար, անշուշտ, ավելի ճիշտ պատկերացում կազմելու հնչյունարանական երևույթների մասին և բացատրելու Կիլիկյան բաղաձայնական համակարգի առաջացումը, որ, մեր կարծիքով, տեղի է ունեցել հնչյութային մակարդակի վրա՝ հակադրությունների պահպանման (խմաստազուրկ ֆունկցիայի) պահանջով: Ի դեպ, հեղինակը գրքի 147-րդ էջում տալիս է միջին հայերենի ձայնավորների, իսկ 182-րդում՝ բաղաձայնների տախտակները: Այդ տախտակների մեջ թե՛ ձայնավորները, և թե՛ բաղաձայնները բնորոշված են այն առանձնահատկություններով, որոնք հատուկ են ժամանակակից գրական լեզվի հնչյունների արտասանությանը, մինչդեռ հազիվ թե այդպիսի նույնություն լինելու Միջին հայերենի հնչյունների արտասանությունը, որոշելու համար պետք է հենվել առավելապես բարբառների տվյալների վրա, որ, ցավոք սրտի, հեղինակը գրեթե չի օգտագործում: Վերջապես, կան նաև մասնակի անճշտություններ հնչյունափոխական երևույթների նկարագրության մեջ: Հեղինակի կարծիքով գրաբարյան ալ երկբարբառը բառամիջում՝ ձայնավորից առաջ և բառավերջում, իսկ երկբարբառը՝ նույն գիրքերում, այն և ոչ երկբարբառները՝ ձայնավորներից առաջ վերածվում են երկու հնչյունի՝ ձայնավորի ու բաղաձայնի կապակցության (էջ 102): Իսկ ճիշտ չէ, գրաբարյան ալ, իսկ, այն կապակցությունները ձայնավորից առաջ և բառավերջում երկբարբառներ չլին, այլ ձայնավորի ու բաղաձայնի (ձայնորդի) կապակցություն: Երկու և թիվ բառերում ունենք ոչ թե ալ և իսկ երկբարբառները, այլ ա, ի ձայնավորների ու ձայնորդ բաղաձայնի կապակցությունը, և թեև հետագայում այդ կապակցու-

թյունները փոփոխության ենթարկվել են, ապա դա արտահայտվել է վ շփական բաղաձայնի և ձայնորդ բաղաձայնի նույնացման մեջ. Վ-ն վերածվել է վ-ի: Խոսելով բառավերջի ոչ-ի մասին, հեղինակը ճիշտ կերպով գրում է, թե ոչ-ը բաղաձայնի բառերի վերջում վերածվել է ո-ի, իսկ «ո և ո-ա խառն հոլովման եզակի թեր հոլովներում՝ ու-ի» (էջ 103), առանց սակայն, փորձելու այդ տարբեր փոփոխությունների պատճառը գտնելու: Մեր կարծիքով հոլովման վերջավորությունների ոչ>ու փոփոխությունը տեղի է ունեցել հոգավոր ձևերում, այսինքն՝ երբ այդ ոչ-ը բաղաձայնից առաջ լինելով՝ վերածվում էր երկբարբառի (մարդոյ, բայց՝ մարդոյն): Ինչպես որ Ռոյս բառը ունենք Ռուս ձևով, այդպես էլ մարդոյն, զետոյն բառերը վերածվեն մարդուն, զետուն ձևերին և այս ձևն է, որ բնահանրացել է նաև անհոգ ձևերի վրա: Այդ բանը շատ լավ ցույց է տալիս երկու բառը իր երկու ձևերով՝ երկու և իրիկուն, որոնցից առաջինը անհոգ ձևն է, ոչ>ո փոփոխությամբ, իսկ երկրորդը՝ հոգավոր ձևը՝ ոչ>ու փոփոխությամբ:

Այս բոլոր վիճելի կետերով ու մասնակի վրիպումներով հանդերձ պրոֆ. Ս. Ղաղարյանի մենագրությունը միջին հայերենի լուրջ ուսումնասիրությունն է և արժեքավոր ավանդ է հայերենի ուսումնասիրության բնագավառում: Մենք էլ ցանկանալ, որ նույնպիսի հաջողություններ էլ նա ավարտի բերականական կառուցվածքի ուսումնասիրությունը:

4. Հեղինակի մահվանից հետո, Շ. Շ. Կոստանյանի խմբագրությամբ հրատարակվել է աղագ. Գ. Ղափանցյանի հայոց լեզվի հին շրջանին նվիրված ուսումնասիրությունը: Այս աշխատության մեջ Գ. Ղափանցյանն ամփոփում է իր զանազան հետազոտությունների արդյունքները և փորձում լուսարանել հայերենի կազմավորման պատմական պրոցեսն ու հայերենի «աղերսները» զանազան լեզուների հետ: Համառոտ ներածականում շարադրելով իր մի բանի դրույթները և թնիկական լեզուների կազմավորման մասին, նա շատ հակիրճ, բայց ոչ միշտ՝ վաստերի ճշտությամբ, տալիս է որոշ տեղեկություններ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության վերաբերյալ:

Բուն աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը բաղկացած է վեց գլխից: Առաջին գլխում (առաջ ժողովրդի և լեզվի

7 Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1961, 360 էջ, գինը 1 ռ. 28 կ.

կազմավորումը», էջ 33—61) հեղինակը համառոտակի ներկայացնում է հայերի ու հայերենի կազմավորման պատմությունը՝ հիմնվելով իր նախորդ աշխատությունների վրա: Երկրորդ գլխում («Հայաստանի լեզվի աղերսը հարևան խեթերենի և արևմտյան վրացերենի հետ», էջ 62—68) նա աշխատում է բացահայտել Հայաստանի լեզվի կապերը՝ մի կողմից խեթերենի, մյուս կողմից՝ արևմտյան վրացերենի հետ, օգտագործելով հայաստական մի բանի հատուկ անուններ: Այս գլխում հեղինակն իր այն կարծիքն է ուզում հիմնավորել, թե իբրև Հայաստանի լեզուն ցեղակից է եղել մի կողմից խեթականին ու խուրիտականին, մյուս կողմից՝ կովկասյանին, հատկապես արևմտյան վրացականին:

Հաջորդ գլխում («Հայաստանի լեզվի, այլ կերպ՝ հայերենի աղերսը վրաց լեզվախմբի հետ», էջ 69—101), հեղինակն զբաղվում է հայերենի և կովկասյան լեզուների ընդհանրությունների քննությամբ: Այստեղ նա, Հայաստանի լեզուն նույնացնելով հայերենի հետ, թվում է հայերենի ու լազո-մեգրելական լեզուների մի շարք ընդհանրություններ, որոնց մեծագույն մասը ընդունելի է, և այն եզրակացությունը հայտնում, թե «Փաստ է հայոց լեզվի, թե զբարարի, և թե բարբառների, սերտ առնչակցությունը լազո-մեգրելական լեզվախմբի հետ, և այդ արտացոլում է թե տարրեր ժամանակաշրջաններ, որ պետք է ավելի կոնկրետավորվի, և թե ապացուցում է, որ հայացման պրոցեսում, ինչպես մասամբ և հետո, հայկական ցեղաֆերմենտները (haia, azzī, bala...) հիմնական կերպով սահմանակցվել են և խառնվել ու ներթափանցվել են վրացական այդ արևմտյան ցեղերի ու լեզուների հետ» (էջ 101): Հիշենք, որ այդպիսի եզրակացության է հանգում մի բանի տասնյակ բառերի քննությամբ:

Չորրորդ գլխում («Հայերենի աղերսը խուրի և ուրարտական լեզուների հետ», էջ 102—146) հեղինակը քննության է առնում խուրիերենի կապը հայերենի հետ (էջ 104—129), ստուգաբանելով 20 բառ և 14 հատուկ անուն, ապա՝ անցնում է ուրարտերենի ու հայերենի առնչություններին: Նա հիշում է 20 բառ, որ, իր կարծիքով, ուրարտական ծագում ունեն, ինչպես և՛ մի բանի բառակազմական ածանցներ ու հատուկ անուններ:

Հինգերորդ գլուխը («Ընդհանուր լեզվատարրեր խեթերենի և հայոց լեզվի մեջ», էջ 147—219) նվիրված է հայերենի և խեթերենի ընդհանրությունների ուսումնասիրությանը: Այստեղ հեղինակն իբրև ելակետ է ընդունում այն դրույթը, որ խեթերենը հնդեվրո-

պական լեզու է: Սրանից էլ ինքին թվում է այն, որ եթե հայերենն ու խեթերենը ցեղակցական կապեր ունեն, ապա դրանով հայերենը կարող է բնորոշվել կամ որպես ասիական լեզու (ոչ հնդեվրոպական) և կամ, գոնե, որպես խաչավորված (երկրնույթ) լեզու: Հեղինակը հայ-խեթական բառային ընդհանրությունները բաժանում է երեք կարգի. ա) խեթերենից հայերենին անցած փոխառություններ, բ) «Հայաստանի և նման ցեղերից» խեթերենին անցած փոխառություններ և գ) «այդ բառերը կարող են եղած լինել թե խեթական նախկին ցեղերի լեզուներում կամ բարբառներում, և թե նրանց սահմանակից կամ շփվող պալայցիների, հայասացիների, մոսխերի և մյուսների լեզուներում» (էջ 148): Մանրամասներն քննելով այն բոլոր բառերը, բառակազմական մասնիկներն ու բերականական ձևերը, որոնք, իր կարծիքով, ընդհանուր են հայերենին և խեթերենին, նա գալիս է այն եզրակացության, որ «հայերենի դիրքը այդ լեզվածագման և կազմավորման տեսակետից ավելի խառն և բարդ է, քան այն նշել է Ֆրիդրիխը խեթերենի մասին» (էջ 219):

Գրքի երկրորդ մասը, որ անավարտ է մնացել, ամբողջապես նվիրված է հայերենի հնդեվրոպական «նստվածքի (բաղկացության)» քննությանը: Այստեղ հեղինակը նկարագրում է հնչյունական համակարգի, բերականական կառուցվածքի և բառապաշարի այն ընդհանրությունները, որոնք համեմատական բերականությունը վեր է հանել: Հեղինակը բերում է 297 հայկական բառարմատներ, որոնք ինքն էլ ընդունում է որպես հնդեվրոպական. ապա հիշում է չորս բառ (արգանդ, արտոյտ, մոր, մուգ) և ստուգաբանում է դարձյալ իբրև հնդեվրոպական: Գրքի 358-րդ էջում նա գրում է. «Մենք այժմ այստեղ կմատնանշենք 4—5 հնդեվրոպական արմատներ, հետո մանրամասն կվերլուծենք Հ. Աճառյանի «Արմ. բառ.»-ում բերվածները, որոնք մեծ մասամբ քննադատության չեն դիմանում...»: Բայց, ինչպես հայտնում է խմբագիրը տողատակի ծանոթության մեջ, նրա արխիվում այդպիսի բան չի գտնվել:

Դիրքը, ամբողջությամբ վերցրած, կարևոր նպաստ է հայոց լեզվի պատմության ուսումնասիրությանը: Երկար տարիներ զբաղվելով փոքրադիական հին, մեռած լեզուներով, Գ. Հափանցյանը հայտնաբերել է այդ, ինչպես և կովկասյան, առանձնապես լազո-մեգրելական լեզուների մի խումբ բառերի ու բառակազմական մասնիկների ընդհանրություններ, որոնք բույս են սփռում հայոց լեզվի պատմության նախնական շրջանի որոշ մութ խնդիրների վրա:

Մասնավորապես արդյունավետ են եղել նրա հետազոտությունները հայ-խեթական ընդհանրությունների մասին. իր քննություններով նա վեր է հանել հայերենի և խեթերենի ոչ միայն բառային, այլև քերականական ընդհանրություններ, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայերենի ցեղակցության խնդրի լուսարանման համար։ Այս տեսակետից էլ, ահա, այս գիրքը արժեքավոր ավանդ է հայերենի նախնական շրջանների, նրա կազմավորման պատմության ուսումնասիրության բնագավառում։ Եվ մենք, առանց զրդի ուղ արժանիքը ժխտելու, կանդ կառնենք նրանում արժարժված մի քանի խոնդիրների վրա։

Հայտնի է, որ իր ուսումնասիրությունների մեջ Դ. Ղափանցյանը այն տեսակետն է արտահայտել, որ հայերենը խաչավորված, տեղական՝ կրճկաոյան-փոքրասիական (ասիանական) — հնդեվրոպական լեզու է։ Այս աշխատության մեջ էլ նա, այդ սկզբունքից ելնելով, դրում է. «Հայերենը ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական փոքրասիական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչավորված նոր լեզու» (էջ 11—12)։ Ինչպես տեսնում ենք, հեղինակի կարծիքով հայերենը խաչավորված լեզու է. բայց միայն այդպիսով հեղինակը չի բավարարվում։ Նա փորձում է ընդհանրապես հիմնավորել խաչավորված, խառնածին լեզուների գոյությունը նաև տեսականորեն։ Նրա կարծիքով «տոհմային հասարակարգում, երբ մոտավոր քանակի և հարկադրային ցեղեր են խաչավորվում և դրանց տարրեր լեզուները իրենց ընդհանուր կառուցվածքով շատ էլ չեն հակասում իրար, թեպետ և ազգակից չեն, կարող է տեղի ունենալ այդ ցեղային տարրեր լեզուների խաչավորում իրենց թե բառամթերքով և թե քերականական տարրերով։ Հայոց լեզվի կազմությունը զգալի կերպով հենց այդպիսի պրոցեսի (կամ պրոցեսների) հետևանք է» (էջ 13)։ Գրքի հետագա ամբողջ շարադրանքը հիմնված է այդ սկզբունքի վրա։

Քննենք այդ տեսությունը։ Ի՞նչ բան է լեզուների խաչավորումը և ի՞նչ հետևանք է ունենում նա խաչավորվող լեզուների կյանքում։ Լեզուների խաչավորում ասելով հասկանում են երկու կամ ավելի այլալեզու ցեղերի (տոհմերի, ժողովուրդների) խառնվելու, իրար ձուլվելու պրոցեսում նրանց բոլորի համար մեկ ընդհանուր լեզվի գոյացումը։

Այսպես կոչված լեզուների խաչավորումը պայքար է ձուլողների և ձուլվողների լեզուների միջև, որի հետևանքը լինում է մեկի հաղթանակը, իսկ մյուսի պարտությունը։ Հնարավոր

է, որ տվյալ դեպքում պարտված լեզուն պահպանվի իրենով խոսող հանրության մի ուրիշ հատվածի մոտ, որ չի ձուլվում ուրիշներին։ Հնարավոր է նաև, որ պատմական որոշ պայմաններում, նվաճողները իրենք ձուլվեն տրվյալ ժողովրդին և կորցնեն իրենց լեզուն։ Բայց այստեղ մեզ համար կարևորն այն չէ, թե ինչ էլի է ունենում այդ պայքարը այս կամ այն կոնկրետ դեպքում և՛ ինչու, այլ այն, որ ոչ մի դեպքում էլ «խաչավորումը» խառնածին լեզու առաջ չի բերում։ Խաչավորումը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական ազդեցությունների մի տեսակը միայն և եթե նա այլ տերմինով են կոչում, քան սովորական փոխառություններ, ապա դա արդարանում է ոչ թե իր հետևանքի ինչ-որ ուրույն բնույթով, այլ միայն պատմա-հասարակական պայմանների առանձնահատկությամբ։ Սովորական փոխառությունները կարող են տեղի ունենալ սովորական հարևանական հարաբերությունների, կուլտուրական ազդեցության, քաղաքական ազդեցությունների հետևանքով, առանց տարրեր ցեղերի կամ ժողովուրդների ասիմիլյացիայի էլ, մինչդեռ «խաչավորում» տերմինով հասկանում են հենց ժողովուրդների կազմավորման ժամանակ կամ նրանց հետագա պատմության բնթացքում ասիմիլյացիայի պրոցեսում պարտվող լեզվի թողած ազդեցությունը հաղթող լեզվի վրա։ Իսկ այդ ազդեցությունը չի կարող տարածվել լեզվի քերականական կառուցվածքի վրա։

Այս ընդհանուր սկզբունքից ելնելով, այժմ անցնենք հայերենին և քննության առնենք այն փաստարկները, որոնցով պրոֆ. Դ. Ղափանցյանն ուզում է հիմնավորել իր տեսությունը։ Իր վերջին աշխատությունների մեջ նա հաստատումնասիրության առարկա դարձրեց Հայաստանի լեզուն։ Այդ լեզվից մեզ սովանդված են որոշ քանակով անձնանուններ, տեղանուններ, տոհմանուններ, որոնց քննության վրա հենվելով, հեղինակը դալիս է այն եզրակացության, թե Հայաստան գտնվել է պատմական Հայաստանում, եփրատ, ճորոխ և Արարս գետերի վերին հոսանքի շրջանում։ Հենվելով, այնուհետև, դարձյալ տեղանունների վերլուծության վրա, նա դիտում է Հայաստանի լեզուն որպես հայերեն։ Հասկանալի է, որ այսպիսի նույնացումը սոսկ ենթադրության արժեք կարող է ունենալ։ Այն հանգամանքը, որ հին Հայաստանի տեղանունների մեջ որոշ հնչյունախմբեր համընկնում են հայերենի այս կամ այն բառին, ածանցին և այլն, դեռ ոչինչ չի կարող ասել հայերենի և այն լեզուների կապի մասին, որոնք խոսվել են Հայաստանի տերիտորիա-

յում: Կասկածից վեր է, որ եթե հաստատված է այս կամ այն ցեղի (ժողովրդի, էթնիկական միավորման) գոյությունն այդ տերիտորիայում՝ այն ժողովրդի կազմավորման շրջանում, ապա նա՝ այդ ցեղը, մտել է հայ ժողովրդի կազմի մեջ. բայց դա չի կարող նշանակել, թե նրա լեզուն էլ անսպաժամ հայ էթնիկական լեզվի բաղադրիչն է դարձել, կամ հենց հայոց լեզուն է: Այդպիսի ծանրակշիռ եզրակացության համար պետք է իմանալ այդ լեզուն և նրա քերականական կառուցվածքի ու բառապաշարի ուսումնասիրությամբ լուծել հարցը: Մենք չենք բացառում, իհարկե, որ հայերենը կարող է հենց Հայաստանի լեզուն լինել. տեսականորեն դա անկարելի չէ: Բայց այդ դեպքում ամենից առաջ պետք է ապացուցվի, որ այդ լեզուն հնդեվրոպական լեզու է եղել, իսկ դրա համար էլ անհրաժեշտ է այդ լեզուն իմանալ:

Հայաստանի լեզուն նույնացնելով հայերենին, մյուս կողմից հեղինակը կապեր է որոնում այդ լեզվի ու ասիական լեզուների միջև և զանազան սուուգաբանությունների վրա հենվելով՝ եզրակացնում, թե քանի որ Հայաստանի լեզուն ցեղակից է խեթերենին, ապա դա վկայում է նրա տեղական բնույթի մասին: Ի դեպ, պրոֆ. Ղափանցյանը ելնում է այն պրույթից, թե խեթերենը հնդեվրոպական լեզու չէ, բայց, ինչպես հայտնի է, այժմ (և իր ժամանակ էլ) արդեն հաստատված է, որ խեթերենը, նեսիտերենը, հիերոգլիֆային խեթերենը պատկանում են հնդեվրոպական ընտանիքին: Այդ կարծիքը կա նաև լուվիերենի, լիկիերենի, լյուդիերենի մասին⁸: Միայն պրոտոխեթերենն է, որ անշատվում է հնդեվրոպականից և հարում կովկասյան ընտանիքին: Իսկ սրանից պետք է համապատասխան մեթոդաբանական եզրակացություն հանել. նախքան հայերենի և խեթերենի ցեղակցության մասին այս կամ այն կարծիքին հանգելը, պետք է որոշակիորեն զատել լեզվական նյութի երկու կարգ հայերենում: Մի կարգի մեջ պետք է մտցնել այն բոլոր ընդհանրությունները, որոնք կան հայերենի ու պրոտոխեթերենի միջև: Եթե այդ ընդհանրություններն ընդգրկում են հայերենի քերականական կառուցվածքը (կամ գոնե դրա էական տարրերը) և բառապաշարի կարևորագույն բառերը, ապա հնարավոր կլինե՞ր եզրակացնել, թե հայերենը ցեղակից է պրոտոխեթերենին, իսկ դրանից էլ կբխե՞ր այն, որ հայերենը ևս,

ինչպես պրոտոխեթերենը, հնդեվրոպական լեզու չէ: Ի հակառակն դատելով, կարող ենք ասել. քանի որ հայերենը հայտնապես հնդեվրոպական լեզու է, ապա նրա և պրոտոխեթերենի միջև ծագումաբանական ընդհանրություններ լինել չեն կարող: Դրանց մեջ եղած ընդհանրություններն, այսպիսով, հնարավոր է դիտել միայն ու միայն որպես ազդեցությունների (ուղղակի կամ անուղղակի) հետևանք:

Երկրորդ կարգի մեջ պետք է մտցնել այն ընդհանրությունները, որոնք կան խեթերենի, հիերոգլիֆային խեթերենի ու նեսիտերենի և հայերենի միջև. այս ընդհանրություններն էլ, իրենց հերթին, անհրաժեշտ է երկու խմբի բաժանել: Մի խմբի մեջ պիտի մտցնել այն ընդհանրությունները, որոնք փոխազդեցությունների հետևանքով են առաջացել, իսկ մյուս խմբի մեջ՝ նրանք, որ այդ ճանապարհով չեն գոյացել: Այստեղ էլ, ուրեմն, պետք է կատարել այնպիսի աշխատանք, ինչպիսին կատարել է Հ. Հյուբշմանը հայ-իրանական ընդհանրությունների նկատմամբ: Իհարկե, այդպիսի խմբավորումը անհրաժեշտ չէ կատարել պարզելու համար՝ հայերենն ու խեթերենը ցեղակից են, թե ոչ: Եթե ընդունվում է, որ հայերենն էլ, խեթերենն էլ հնդեվրոպական լեզուներ են, ապա դա ինքնին արդեն նշանակում է, թե նրանք ցեղակից են: Այդ խմբավորումը անհրաժեշտ կլինե՞ր այն բանի համար, որպեսզի պարզվի, թե հնդեվրոպական լեզուների շարքում հայերենն ու խեթերենը ինչպիսի՞ հարաբերության մեջ են՝ հեռավոր, թե մերձավոր:

Պրոֆ. Ղափանցյանն այդպիսի տարբերակումներ չի կատարում, այլ բոլոր ընդհանրությունները միևնույն մակարդակի վրա է դնում և դրա հիման վրա իր ենթադրություններն անում: Այդ նշանակում է, թե նրա մոտեցումն արդեն ճիշտ չէ:

Անցնենք, ի վերջո, պրոֆ. Գ. Ղափանցյանի լեզվաբանական այն փաստարկներին, որոնցով նա ուզում է հիմնավորել իր տեսակետը:

Ինչպես հայտնի է, լեզուների ծագումաբանական ցեղակցությունը որոշելու առաջին և վճռական կովանք քերականական կառուցվածքի նյութական միավորների (բառահարաբերական ձևույթների) ընդհանրությունն է: Ուր որ այդ ընդհանրությունը գոյություն չունի, չկա նաև լեզուների ցեղակցություն: Արդ, հայերենի քերականական կառուցվածքի նյութական միավորները հնդեվրոպական են, ուստի և հայերենը իր քերականական կառուցվածքով հնդեվրոպական լեզու է: Այս բանն այնքան ճշգրտորեն հաստատված է, որ Գ. Ղափանցյանն

⁸ Տե՛ս. օրինակ, Н. М. Дунаевская, О характере и о связях языков древней Малой Азии, „Вопросы языкознания“, 1954, № 6.

էլ շատ անգամ ստիպված է եղել խոստովանել, իր այս աշխատության մեջ էլ նա գրում է. «Հալերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական» (էջ 31)։ Այսպես թավական էր արդեն, որ խնդիրը լուծված համարեր. և շնայած դրան, հենց նույն տեղում նա ավելացնում է. «Սուրստրատի (ուրեմն և սուպերստրատի) թե ագստրատի խնդիրը կորոշվի ուսումնասիրության վերջնական տվյալներով, թեպետ նախկին իմ ուսումնասիրությունների տվյալներով, որոնք լրիվ չէին և թերևս սխեմատիկ, գերակշռում է ասիանիկ (իմա ոչ հնդեվրոպական—է. Ա.) լեզուների բաղկացական բովանդակությունը» (էջ 31)։ Իսկ ինչո՞ւ է հիմնավորվում այդ կարծիքը։ Նա գրում է, որ հալերենի քերականության մեջ էլ կան ինչ-որ ոչ հնդեվրոպական տարրեր. դրանցից են, նրա կարծիքով, -a հոլովական վերջավորությունը, որ կապում է վրացական -in վերջավորության հետ, բայի հոգն. 3-րդ դեմքի և վերջավորությունը, որ դարձյալ կապում է վրացերենի հետ՝ համեմատելով *აქადი «են»* ձևի վերջահանգ ն-ի հետ և այլն։ Բայց այս համեմատություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ. այդ երկուսն էլ ստուգարանված են որպես հնդեվրոպական մասնիկներ և այդ ստուգարանություններն այնքան հիմնավորված են, որ կասկած չեն հարուցում։ Մինչդեռ Գ. Ղափանցյանը դրանք համարում է կովկասյան տարրեր, որովհետև հարկավոր է հայերենի մեջ դնել ոչ հնդեվրոպական՝ խեթա-կովկասյան բաղկացական բովանդակություն։

Իր տեսության համար նա ավելի զորավոր կռվան է համարում բառապաշարի տվյալները, իհարկե, իր մեկնարանությամբ. նա գրում է, թե հայերենի հնդեվրոպական ծագումով բառերի թիվը չորս հարյուրից չի անցնում, մինչդեռ կան մոտ հինգ հազար շատուգարանված արմատական բառեր, որոնք տեղական, ասիանական են։ Ըստ որում, իր այդ հայտարարությանն ավելի հեղինակություն տալու համար, նա հիշեցնում է, թե Հ. Հյուբշմանը միայն այդքանն էր ընդունում։ Ամենից առաջ, այստեղ հասարակ թվարանական անճշտություն կա. Հյուբշմանը մեկ թվահամարի տակ բերում է հնի. տվյալ արմատից ծագած բոլոր բառերը. օրինակ, զաղա և զոդ բառերը ծագում են միևնույն հնդեվրոպական արմատից, ուստի և մեկ թվահամարի տակ են դրված։ Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» կազմված է հայերենի տվյալներով, այսինքն՝ յուրաքանչյուր բառ, որ հայերենի բառակազմական օրենքներով չի կարող մասնատվել (բաղադրիչների բաժանվել) և կամ նույնացվել մի այլ արմատի հետ, հա-

մարված է առանձին արմատական բառ. այսպես, հիշյալ զոդ և զաղա բառերը հայերենի ոչ քերականական, ոչ էլ բառակազմական օրենքներով նույնացվել չեն կարող, ուստի և նրանցից յուրաքանչյուրը մեկ արմատական բառ է, որ Հյուբշմանի կողմից իսկ ընդունված ստուգարանություններով քնիկ հայերեն բառերի թիվը կրկնապատկում է. թավական է հիշել, օրինակ, որ դալար, դեղ, դեղձ, դեղձանիկ, դաղձ, դեղին բառերը հնի. մեկ արմատից են ծագում։ Ե. Ղափանցյանը հաշվի չի առնում այս և, մոռանում է, որ որքանով դրանք ավելացնում են հնդեվրոպական բառերի քանակը, նույնքանով էլ մեծացնում են հայերեն արմատների ընդհանուր թիվը։

Այնուհետև, Գ. Ղափանցյանը գտնում է, որ շատուգարանված հինգ հազար արմատները «տեղական, ասիանական» լեզուների բառերն են։ Այստեղ էլ նախ պետք է կիսել այդ թիվը, որովհետև այդ թվից մոտ երկու հազար հինգ հարյուրը, այսպես կոչված, սուտ բառերն են, այսինքն՝ բառեր, որոնք հայ մատենագրության մեջ չեն գործածված, այլ կան միայն նոր շրջանի այս կամ այն բառարանում, հատկապես Արեմիայի բառարանում։ Իհարկե, դրանից հետո դարձյալ կմնա շուրջ երկուսուկես հազար բառ, բայց ո՞ւր է ասել, և ինչից գիտենք, որ դրանք անպայման ասիանական լեզուներից են գալիս. իսկ եթե դրանցից են գալիս, ապա որից հատկապես. պրոտոխեթերենից, ուրարտերենից, թե՛ խեթերենից, նեսիտերենից, լուվիերենից և այլն։ Այս հարցին պատասխան չի տրվում, և առայժմ չի էլ շորվի, քանի դեռ այդ լեզուների բառապաշարը մեզ լրիվ հայտնի չէ։ Կարելի էր նաև մի ուրիշ դիտողություն անել. Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» լույս տեսնելուց հետո հայ և օտար լեզվաբաններ ստուգարանել են մոտ երկու հարյուր բառ, որի մեծագույն մասը (մոտ 140) հնդեվրոպական է. մյուսների էլ զգալի մասը՝ իրանական. ինչ երաշխիք ունենք, որ այդպես չէ նաև մնացած 2300-ի մեծագույն մասը։ Սրանք հարցել են, որոնց առայժմ ոչ մի վճռական պատասխան տալ չի կարելի, բայց որոնք անպայման պետք է նկատի ունենալ, նախքան հաջորդել բառապաշարի մասին որևէ եզրակացություն հանելու։

Վերջապես, ընդունենք մի պահ, որ այդ երկու հազար, նույնիսկ հինգ հազար բառերը միայն ուրարտական են. իսկ ի՞նչ կփոխի դա լեզվի ցեղակցությունը որոշելու համար. կականք քերականությունն է. իսկ քերականությունը հայոց լեզուն հնդեվրոպական է։ Բառային կազմի կողմից լեզվի ցեղակցության հա-

մար կարևորը բառերի քանակը չէ, այլ որակը, այսինքն՝ այն, թե ինչպիսի բառեր կան, որոնք փոխառյալ չեն։ Այն կարգի բառերը, ինչպիսիք են քաղաքը, իշխան, սեպուհ և այլն, կարող են հարյուրներով փոխառված լինել, և դա ոչ մի կական նշանակություն չի ունենա հնդեվրոպական լեզուների բառային ընդհանրությունների համար։ Այդպիսի բառերը կարող էին լեզվի մեջ առաջ գալ միայն պետության ծագման դարաշրջանում, իսկ հնդեվրոպական լեզուները բաժանվել են իրարից տոհմատիրական հասարակարգի դարաշրջանում։ Պատահական չէ, հետևաբար, որ այդ լեզուները ընդհանուր բառ չունեն, օրինակ, թագավորի համար։ Մեր կյանքից օրինակ վերցնելով, կարող էինք հարց տալ, թե ի՞նչ նշանակություն ունեն հայերենի ցեղակցությունը որոշելու համար այնպիսի բառերը, ինչպիսիք են հեռագիր, հեռախոս, սավառակ, սավառնոդ, հեռուստատես, դյուղատիտես, պատմարան, երկրաբան և այլն, և այլն, կամ հազարավոր այնպիսի փոխառություններ, ինչպիսիք են կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիզմ, տրակտոր, կոմբայն, սովխոզ, ուսգիտ, իդեալիզմ, ֆիմիա, ֆիզիկա և այլն, և այլն։ Այդ բառերի արտահայտած հասկացությունները չկային և չէին կարող լինել այն դարաշրջանում, երբ հնդեվրոպական լեզուները դեռևս բաժանված չէին իրարից, իսկ այդ նշանակում է, թե բառերն էլ չէին կարող լինել։ Սրան կարելի էր գուցե առարկել, ասելով, թե այս բառերը վերջին հարյուրամյակում են մտել հայերենի մեջ, իսկ այն շատուգարանված հինգ հազար բառերը հայերենում կային արդեն V դարում և դեռ նրանից առաջ, այլ կերպ ասած, ավելի քան երկու և կես հազարամյակ է բաժանում մեզ այն դարաշրջանից, երբ այդ բառերը (ավելի ճիշտ՝ նրանց մի մասը) մտել են հայերենի մեջ։ Ես ճիշտ է, իհարկե, բայց չէ՞ որ հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանն էլ բաժանված է դարձյալ երկու և կես, իսկ նոր ուսումնասիրությունների համաձայն՝ երեքից չորս հազարամյակով այն դարաշրջանից, երբ հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերն ու ցեղախմբերը դեռ միասին էին ապրում։ Այդ պատճառով էլ, երբ խոսքը վերաբերում է հնդեվրոպական լեզուների բառային ընդհանրություններին, պետք է քննության նյութ դարձնել այն բառերը, որոնք կարող էին լինել այդ վաղնջական ժամանակներում, իսկ դրանցից էլ հատկապես նրանք, որ առավելագույն կայուն, դիմացկուն են ու սակավ դեպքերում են փոխառվում։

Այդ կարգի մի հարյուր արմատական բառի ծագումնաբանական ընդհանրությունը քերականական

կանական նյութական միավորների (ձևությունների) հետ, բավական է տվյալ լեզվի ցեղակցությունը որոշելու համար։ Թող այն հինգ հազար բառերն էլ տեղական (տեղատեղական, պրոտոֆեթական, վրացական և այլն) լեզուներից մտած լինեն հայերենի մեջ, բանի ու հայերենի բնականական միավորները (ձևություններ) և վերը ճիշտ կարգի բառերի հնչող մեծամասնությունը հնդեվրոպական են, ապա՝ հայերենը հնդեվրոպական լեզու է։

Ի վերջո, անհրաժեշտ է խոսել նաև պրոֆ. Գ. Ղափանցյանի ստուգաբանությունների մասին։ Ինչպես իր ուրիշ աշխատությունների, այնպես էլ այս գրքի մեջ նա հայտարարում է, թե հնդեվրոպական լեզվաբանության ներկայացուցիչների շատ ստուգաբանություններ ընդունելի չեն, և իր կողմից ճիշտ համարված հնդեվրոպական ծագումով հայերեն բառերը թվելով ու նրանց ստուգաբանությունները հիշելով, գրում է. «Բայց իհարկե հնդեվրոպական արմատները հայերենում ավելի են, քան բերված երեք հարյուրը։ Մենք այստեղ կմատնանշենք 4—5 հնդեվրոպական արմատներ, հետո մանրամասն կվերլուծենք 2. Աճառյանի «Արմ. բառ.»-ում բերվածները, որոնք մեծ մասամբ քննության չեն դիմանում» (էջ 358)։ Դժբախտաբար, նա չի հասցրել այդ վերլուծությունները կատարել, որպեսզի իմանայինք դրանց դիտական արժեքը։ Բայց մենք այդ կարող ենք իմանալ նաև ուրիշ միջոցով. իր աշխատության մեջ նա բազմաթիվ ստուգաբանություններ ունի, և եթե մենք դրանցից գոնե մի քանիսի վերլուծությամբ կարողանանք պարզել նրա ստուգաբանական վերլուծությունների մեթոդը, ապա գաղափար կկազմենք և՛ այն մասին, թե ինչ արժեք են ներկայացնում այդ ստուգաբանությունները, և՛ այն մասին, թե ի՞նչ չափանիշով էր նա դնահատում 2. Աճառյանի բառարանում բերված ստուգաբանությունները։

Արաբկիրի բարբառում կա խոխո բառը, որ գործածում են երևիսներին վախեցնելու համար. Գ. Ղափանցյանն այդ բառն ստուգաբանում է այսպես. «Հայաստանի Karhuhus աստ-

վածանունը լրիվ չի կարգացվում, եղծված են «kar» (կամ «ka-er») նշանակող բևեռագրերը, բայց կարգեմիշի հիերոգլիֆ-խեթական մի արձանագրության մեջ կա լրիվ գրությամբ այդ աստվածանունը, որը, ինչպես տեսնում ենք, միայն Հայաստանի չէր պատկանում։ Բառը բարդ է, կազմված է kar և buhu մասերից (S ուղղ. հուլ. վերջավորություն է)։ Վերջին մասը կարելի է համեմատել խեթական (թե բևեռագիր և թե հիերոգլիֆ արձանագրություն-

ներում. buba «պապ» բառի հետ, որը առանում ենք և խոսքի տեր են հատուկ աշխատանքների մեջ Huhā, Huban, Nisbuba, Subišbuba, Aribuba (աշխատաշխատ) և այլն: Հայոց մեջ ևս կհամեմատենք արարկիրացոց «խոխո» բառը (խոխոն կուգա), որով վախեցնում են երեխաներին: Պետք է ասել, որ բեկոագիրը չունի հատուկ «ս» հնչման համար նշանագիր և այդ արտահայտում է «u» նշանով, այնպես որ Karbubu գրությունը տվյալ դեպքում հնչվել է kaxoxo (Կարխոխո): Այնուհետև հիշելով Հ. Աճառյանի «Գաղափարական բառարանում» բերված խոխ (Մանիսա և Երզնկա) «երևակայական կակ մը, որով մանուկները կվախեցնեն», խոխոն (Մանիսայում) պրսկ. kux «կնյուն», 2. նույն կնյունով շինված տգեղ և ահոելի կերպարան, որով տղարը կվախեցնեն» բառերը, եզրակացնում է. «Ըստ իս, այդ խոխ կամ խոխո բառը, ինչպես ցույց է տալիս և արարկիրացոց նման բառը, իրոք որ երևակայական կակ է և ոչ մի կապ չունի պարսկական kux «ձիու կամ շան ճանճ» բառի հետ (որից մենք կունենայինք «կոխ» կամ «բոխ» փոխառությունը) և հնագույն տեղական, այսինքն՝ Հայաստանի և շրջակա երկրների թանկագին մի մնացորդ է» (էջ 63—64): Այս ստուգաբանությունը մի քանի գիտելի կետեր ունի. նախ՝ Հ. Աճառյանը Մանիսայի խոխոն բառն է կապում պարսկերենի, և այն էլ ոչ թե kux «ձիու կամ շան ճանճ», այլ՝ kux «կնյուն» բառի հետ, որ իմաստով նույնական է՝ հրկրորդ՝ Մանիսայում այդ խոխոն բառը, երկրորդ իմաստով, տարրեր է խոխ բառից, որ կա նաև երզնկայում: Երրորդ, ինչ հիմունքով կարելի է խեթական DUDU-ն միացնել հայաստական hūhu-ի հետ. և որ ուրիշ դեպքերում խեթական D-ն համապատասխանում է, բայց Գ. Ղափանցյանի, հայաստական ինչ Զորորդ՝ ինչ հիմունքով խեթական Huhu, Huban և buba (Nisbuba են) բառերը կարելի է միացնել իրար հետ: Այս բոլորի պատասխանը չկա և չի էլ կարող լինել, որովհետև նրանք նույնական չեն: Վերջապես, արարկիրացոց (և ոչ միայն արարկիրացոց) խոխո-ն ոչ մի կապ չունի դրանց հետ. հայտնի է, որ նույն իմաստով (երեխաներին վախեցնելու համար) մեր բարբառներում գործածում են նաև բորո, բուրո, հուհու, տուտու, փուփու և նման բառեր, բայց այդ բոլորն էլ ձայնարկությամբ ստացված բառեր են, ինչպես և հու, խու, խոհ, բոհ, բա և այլն, որոնք բոլորն էլ երեխաներին վախեցնելու համար են գործածում: Կապել այդ խոխո-ն կամ բորո-ն

(համա. Բորոն կծի), որ շատ ավելի նման է Karbubu-ին, նշանակում է անտեսել բառերի իսկական պատմությունը:

Կամենայով հաստատել, որ -բոր-||բեր խեթական բառը նշանակել է «տուն, տոհմ» և կապելով դրանք մեր Տուրուբերան, Արբերան և այլ հատուկ անունների հետ, ավելացնում է. «Բացի վերոհիշյալ վկայություններից, ber «տոհմ-ցեղ» բառը գործ էածվել և նախարարական հետևյալ տոհմանունների մեջ՝ Տարբերունի, որը նշանակում է Տուրուբերանի հետ, Տամբեր «տամ տոհմ» և Քաջբերունի, որը հավանորեն ստացվել է Քաջբերունի ձևից, նշանակելով kas (kaska կամ gaska) ցեղից. համեմատել Սյունիքի «Քաշաբաղ գաւառ» «բաշի մարզ», «Քաշունիք»: ...Սյունիքում կար և առանձին գյուղ Բերան անունով, որ կարող է նշանական «տոհմեր», ինչպես և Ութբերուն գյուղը նույն տեղում թերևս «ութ տոհմ» նշանակությամբ» (էջ 51): Այստեղ արգեն ստուգաբանական ոչ մի սկզբունք գոյություն չունի. Քաջբերունի-ն չէր կարող ստացվել Քաջբերունի-ից, որովհետև հայերենում չ-ն, այն էլ պայթականից առաջ, չ չի դառնում: Քաշաբաղ գաւառ, Քաշի մարզ, Քաշունիք ոչ մի կապ չունեն կաշկա կամ զաշգա ցեղանվան հետ. Ղարաբաղի, Մեղրու և այլ բարբառներում կան բաշ ձևեր, ցած, և բաշ «ազոավ» բառերը. Քաշի մարզ նշանակում է ներքին, ցածի մարզ, Քաշունիք և Քաշաբաղ կապվում են կամ մեկի (բաշ «ազոավ») կամ մյուսի հետ (ստուգաբանելու համար անհրաժեշտ են պատմական ու աշխարհագրական տեղեկություններ): Ութբերուն ոչ մի կապ չունի ոչ ութ թվականի, ոչ էլ ութ «տոհմ» բառի հետ. այդ, ինչպես և՛ Դաշբերուն (= Դաշբերուն), Կարաբերուն և այլ-բերուն-ները թուրքական են:

Արտոյտ բառը ստուգաբանում է, կապելով լիտ. strazdas, «սու. արոձ. հին իսլ. strazir, լատ. iudus բառերի հետ: Այդ բառերի նախաձևն է *trod, որ, իր կարծիքով, դարձել է *rtod (rtut) անուն. բայց որով, որպեսզի հնի. u և j. ոչ տարապայման հնչյունավորության հարցն էլ վերանա, նա գտնում է, որ բարբառների արտուտ, առտուտ ձևերը ու ձայնավորով, ավելի հին են (էջ 359): Այս ստուգաբանությունը ևս բնորոշելի չէ. նախ բարբառային արտուտ ձևը նախնական չէ. նույն հարաբերության մեջ է հին արտոյտ ձևի հետ, ինչպես՝ բոյս-ը՝ բուս-ի, բոյսո բուս-ի, լոյս-ը՝ լուս-ի հետ և այլն: Դրա լավագույն ապացույցն է բարբառների արտուտիկ (արգուդիդ, արդուդիկ) ձևը, որ կարող էր ստացվել միայն արտոյտ-ից, հակառակ պարագա-

յում պետք է լինեն արարածի: Երկրորդ՝ հնիս. *tiōd* ձևից հայերենում կարող էր լինել երես *||* երես, կամ, եթե ընդունենք, որ նախածեր *te* և *ti* տեղափոխությամբ դարձել էր *tiōd*, պետք է ունենայինք արդյո՞ւ արդյո՞ւ, որովհետև հնդեվրոպական պարզ խուլ պայթականների ռեզակներից ու նայերից հետո վերածվում են ձայնեղ պայթականների (հմտ. *լստ. ante «տոճե»* հյ. (յր) -տեղ, հնիս. *penk'ae* > հյ. եխեղ, հն. *pen* > հյ. (յ)արյ և այլն): Ինչպես տեսնում ենք, հնչյունական օրենքներից և ոչ մեկն էլ հաշվի չի առնված, իսկ առանց դրան ստուգարանությունը զրկվում է իրական հիմքից:

Այս օրինակներով բավականանալով և վերջին մեր արած դիտողությունների վրա հիմնվելով, կարող ենք եզրակացնել, որ պրոֆ. Գ. Ղափանցյանի ստուգարանությունների ճշշող մեծամասնությունը չի դիմանում քննադատության. թեև նա ինքր հաճախ շեշտում է, թե ստուգարանությունների և, առհասարակ, լեզվաբանական ուսումնասիրությունների մեջ պետք է հենվել առաջին հերթին պատմական տվյալների վրա, նկատի ունենալով յուրաքանչյուր բառի իրական պատմությունն ու խստորեն ձևակերպելով հնչյունական օրենքներին, բայց ինքն այդ ճիշտ սկզբունքին չի հետևում:

Ամփոփելով մեր ասածները ակադ. Գ. Ղափանցյանի աշխատության մասին, կարող ենք հանդել հետևյալ ընդհանուր եզրակացություն. միանգամայն զրական է այն, որ հեղինակը մեծապես ընդարձակում է հայոց լեզվի ուսումնասիրության շրջանակները, քննում և վեր հանում հայերենի և փոքրասիական և կովկասյան լեզուների կապերը, սակայն, իր հայտնաբերած փաստերը նա մեկնաբանում է մեթոդաբանական ոչ ճիշտ մոտեցմամբ՝ լեզուների խաչավորման տեսության դիրքերից ելնելով: Իր ստուգարանությունների մեջ նա հաճախ կամայական, քննադատության չդիմացող համեմատություններ է կատարում, թեև այդ չի նշանակում, որ նա ճիշտ ստուգարանություններ չունի: Այդպես չէ, իհարկե. Գ. Ղափանցյանի այս աշխատության մեջ կան և ճիշտ ստուգարանություններ, և, մանավանդ, խորաթափանց դիտողություններ ու կռահումներ, բայց հենց այդ ճշմարիտ գտնելու և օգտագործելու համար անհրաժեշտ է խիստ զգուշավորությամբ քննության առնել այն հսկայական փաստական նյութը, որ ամփոփված է այս գրքի մեջ:

Մեր հոգվածն ամբողջացնելու համար հարկ ենք համարում մի քանի խոսք ասել նաև Թ. Ղարազյուլյանի՝ Հին հայերենի խոնարհ-

ման համակարգին նվիրված աշխատության մասին²: Հնդկական խրախուսելի գործ է կատարել, ամփոփելով այն ամենը, որ կատարված է XIX դարի 40-ական թվականներից մինչև մեր օրերը հայերենի խոնարհման համակարգի համեմատական ուսումնասիրության բնագավառում և փորձել, զանազան հարցերի մասին արտահայտված տարբեր տեսակետները քննության առնելով, ճիշտ եզրակացությունների հանգել հայերենի խոնարհման համակարգի առաջացման խնդրում: Երեք գլուխների մեջ հեղինակը նախ՝ շարադրում է հարցի պատմությունը («Հին հայերենի խոնարհման համակարգի համեմատական ուսումնասիրության համառոտ ակնարկ», էջ 7—43), ապա՝ համառոտակի ներկայացնում հնդեվրոպական խոնարհման պատկերն ու նրա հետագա զարգացման ընդհանուր բնութագիրը («Խոնարհումը հնդեվրոպական լեզվում և նրա հետագա զարգացումը», էջ 44—57) և այնուհետև անցնում բուն նյութի քննությանը («Հին հայերենի խոնարհման համակարգը», էջ 58—175): Այստեղ նա ուսումնասիրում է հին հայերենի բայական հիմքերը, ժամանակային ձևերը, եղանակները, սեռերը, դիմային վերջավորություններն ու նրանց ծագումը: Երբի խմբագիրը լինելով, մենք ձևաբանական էնք մնում աշխատությունը մանրամասնորեն գրախոսելուց և գնահատելուց, ուզում ենք, սակայն, ցանկություն հայտնել, որ հեղինակն իր այս մենագրությամբ ավարտված շահմարեր իր աշխատանքը հայերենի խոնարհման համակարգի ու նրա ծագման ուսումնասիրության բնագավառում. անկասկած խրախուսելի է այն, ինչ որ նա ներկայացրել է այս մենագրության մեջ, բայց նրա հետագա հետազոտությունների խնդիրը պետք է լինի լուսաբանել այն բազմաթիվ հարցերը, որոնք, ինչպես ինքը շեշտում է, գեոևս ընդունելի լուծում չեն ստացել:

* * *

Մենք փորձեցինք ներկայացնել հայոց լեզվի պատմության ու համեմատական ուսումնասիրության բնագավառին վերաբերող, վերջին տարիներում լույս տեսած մենագրությունների համառոտ բովանդակությունը, գնահատել դրանք ընդհանուր կերպով և կանգ առնել այդ աշխատությունների մեջ արժարժված մի

9 Թ. Ա. Ղարազյուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգը, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1961, 180 էջ, գինը 63 կ.

քանի խնդիրների վրա, հայտնելով մեր կարծիքը դրանց մասին: Լենշուշու մենք այս հողավածում չենք սպառել այն բոլոր կարևոր հարցերը, որոնք շոշափվել են դրանց մեջ և իրենց լուծումն ստացել: Մենք քննարկման նյութ ենք դարձրել մեզ առավելապես՝ կարևոր թվացող

հարցերը, ընթերցողների ուշադրությանն առաջարկելով մեր տեսակետները, որոնք, անշուշտ, նույնպես կարող են վիճելի լինել:

Հայկական ԵՍԻՄ ԳԱ թղթ. անդամ

Է. ԱՂԱՅԱՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ, *Պապիկյան շարժման պատմության ուսումնասիրությունը* (ռուսերեն), ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1961, 218 էջ, գինը 87 կ.:

Միջնադարի սոցիալական շարժումներում եղանակալի տեղ գրավող «Ներեափեոսություններ» մեջ պապիկյան շարժումը հետաքրքրական է որպես ժողովրդական մասսաների ամենից ցայտուն և լայն ելույթներից մեկը: Պապիկյանների գաղափարախոսության մեջ էկեզեզու նկատմամբ կրոնա-գաղափարական զարգացիայի դուզորդումը սոցիալական պահանջների հետ բացատրվում է երանով, որ «բոլոր բնահանուր բնույթ կրող հարձակումները, որ կատարվում էին ֆեոդալիզմի և ամենից առաջ էկեզեզու դեմ՝ ինչպես նաև հեղափոխական, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները միաժամանակ նաև աստվածաբանական հերեափեոսություններ պիտի լինեն»¹:

Պապիկյան շարժումը խոր հետք է թողել Հայաստանի և Բյուզանդիայի պատմության մեջ: Երաւ արձագանքները որոնել են եվրոպական հերեափեոսական հոսանքներում: Սակայն շարժման ամբողջական ուսումնասիրության մեջ անցյալում գրանործել է բուրժուական պատմագրության տեղեկեցիկ վերաբերմունքը, որը միտում էր ժողովրդական մասսաների գերակամ գովաբանում Բյուզանդիայի պետական կառավարության սխառմը՝ երբեմն երաւ պատմության մեջ տեսնելով շղատակարգերի հաջաարակչությունը²: Պատմության մեջ տեղի ունեցած սոցիալական, ինչպես և ամեն մի շարժման օրյեկտիվ ուսումնասիրությունը կարող է խորսիվել միայն մարքսիստական մեթոդոլոգիայի վրա: Սովետական հետազոտողները, հրաժարվելով բուրժուական բյուզանդա-

գիտության արագիցիայից, առաջին անգամ ուշադրություն դարձրին շարժման հենց սոցիալական բնույթի վրա: Չնայած պապիկյանության պրոբլեմի շուրջը վերջին տարիների բնթացքում նկատվող աշխուժությանը, այնուամենայնիվ հատուկ մենագրական ուսումնասիրություն, որը բազմակողմանիորեն և խոր լուսարաններ պապիկյանների շարժումը, դեռ չի ստեղծված: Այս կապակցությամբ, անկասկած, հետաքրքրություն է ներկայացնում գրախոսվող գիրքը: Այն նվիրված է պապիկյան շարժման VIII—XI դդ. գրական աղբյուրների վերլուծմանը: Բացի գրանից, գիրքը պարունակում է մի շարք աղբյուրների այնպիսի տեքստերի թարգմանություններ, որոնք պատմական խաչոր արժեք են ներկայացնում, թեև գրվել են պապիկյան «Ներեափեոսության» հակառակորդների կողմից և աչքի են ընկնում իրենց ծալրահեղ միտումնավորությամբ: Հանրահայտ է, որ միջին դարերում կղերականությունը առաքրեղից վերացրել է բոլոր «Ներեափեոսական» գրվածքները՝ պատմությանը թողնելով միայն իր սեփական գրական ստեղծագործությունները: Եվ աղբյուրադիտության մասնականակից մեթոդների մակարդակով կատարվող ուշադիր ուսումնասիրությունն է միայն արժեքավոր դարձնում այդ հուշարձանները պատմագիտության համար: Դժվարությունները, սակայն, գրանով չեն սահմանափակվում: պապիկյան շարժման աշխարհագրական լայն սահմանների մեջ ներգրավվել էին Փոքր Ասիայի տարրերերկրներ, և այդ է պատճառը, որ պապիկյանների մասին վկայություններ կան ցրված հայ, հունական և արաբական աղբյուրներում:

Հեղինակն իր առաջ խնդիր է դրել ուսումնասիրել այդ աղբյուրները, բնդ որում հունական աղբյուրների հետ միասին առավել հանգամանորեն օգտագործել է նաև հայկական

¹ Ֆ. Էնգելս, Գյուզացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46:

² H. St.-L. Moss, Die geschichtliche Bedeutung von Byzanz, „Historia mundi“, Bd. 4, Bern, 1956, S. 553.